№ 229 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 229

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".
Յայտարարութիւնների համար պետք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая, 8, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը վշտով յայտնում է, որ ներկայ հոկտեմբերի 12 ին, երիկամունքների բորբոքումից Մոսկվայում վախճանվել է իր աշխատակից

ԷՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀԱՆԱՅ

ՆԱԶԱՐԵԱՆՑԸ

Հեռագրաթիւերի փչացած լինելու պատճառով՝ այդ ցաւալի տեղեկութիւնը խմբագրութիւնը ստացաւ երէկ, ցերեկվայ ժամը 12-ին։

ԹԻՖԼԻՍԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
«ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ» — ԴԻՐԵԿՑԻԱ Պ. Օ. ԶԱՐԷՁՆԻԻ
Այսօր, երեքշաբթի, հոկտեմբերի 16-ին 1912 թ. կը ներկայացվի առաջին անգամ նոր պիէս՝ ԻՆՏԵՆԴԱՆՏՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ, Մոսկվայի Կօշի թատրոնի ըէպէրտուարից.—
„ПЕСКИ СЫПУЧІЕ" Պիէս 4 գործ., Սերգէյ Գարինի։ Սկիզբը երեկ. ժամը 8-ին:
առ. 772. 1—1

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև տարբերակներով, ԲԱԳԻՒ պրէպարատներով և էլեքտրականութեամբ։
Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Սօլոլակ, Բէյնութեան փող. № 23 (անկիւն Գանօվսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 699. 100—22

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
Ներքին և երեխաների հիւանդութիւններ, առանձնապէս թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատորակով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ. (երեկոյեան 5—7 ժ.
Սօլոլակ, Բոլշէվոկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմաց)։
(Ե. Հ. Կ.) առ. 746. 100—8

ԲԺԻՇԿ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
փոխադրվեց «Փետրվարի 19-ի փողոցը» (նախկին Պէկօվսկայա) № 30.
Վիրաբուժական հիւանդութիւններ
ՄԱՍՆԱՒՈՐԱԳԷՍ՝ բժշկում նորագոյն ձևով սեռական զգայարանների (սուլ և բրօնիկական սուսամակի), միզափամփուշտային քարերի՝ առանց վիրահատութեան (փշրելով), սեռական զգայարանների անկարութեան (импотенція) և այլն, տիֆիլիսի 606 և 914-ով։ Թոքախտի բժշկումն վիրաբուժական միջոցով (արհեստական օդանցքաղաղանթ—искусств. пневмотораксъ) Forlanini, Brauer եւ այլոց ծեւով։
Ընդունելութեան ժամերը՝ առ. ժ. 12—1-ը, եր. 5—7-ը։
(Ա.օ.) առ. 761. 100—5

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և սատանայ աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։ (երեկ. ժ. 5—7-ը։
Միխայլովսկի պր. 86, տէլէֆ. № 576.
(Ե.Հ.Կ.) առ. 179. 100—44

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 և 14 հոկտեմբերի

Սոֆիա.—Քրքիլիսէն վերցնելուց յետոյ բոլգարները ձեռք ձգեցին մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Մէխոմիայի անձնատուր լինելուց յետոյ բոլգարները գրաւեցին երկու թնդանօթ.

Բոլոր կծերի վրա տեղի է ունենում կատաղի կռիւ։ Ամենուրեք թիւրքերը յետ են մղված իրանց դիրքերից։ Տամրաշ շրջանը վերջնականապէս կտրված է թիւրքական երկրից։ Ադրիանուպոլսի առաջ բոլգարները հասան թիւրքական խառնիճաղանճ զօրքի։ Թիւրքերը սարսափահար փախան, թողնելով սպանված 100 և տալով գերի 160 հոգու։ Բոլգարների կորուստները աննշան են։ Հիւսիս-արևելեան կողմում գրաւված է Ադրիանուպոլսի Էլին ամրոցը։ Թիւրքերը կատաղի կռիւից յետոյ փախան բերդը, թողնելով կռիւի դաշտում մեծ թիվով սպանվածներ և վիրաւորներ։ Մի թիւրքական գունդ փորձեց շրջել բոլգարների թիկունքի կողմից, բայց գլխովին սրի քաշվեց։ Բոլգարները գրաւելով Սև ծովի ափային Վասիլիկօն, շարժվեցին դէպի Բիզէ։ Մալօդրինօվօ քաղաքը ընկաւ բոլգարների ձեռքը։ Դերձները պատմում են, որ թիւրքերը կազմալուծված են, ստանում են վատ կերակուր, շարունակ հրդեհում են գիւղեր Սարամի ափերում։

Դրութիւնը Ադրիանուպոլսի առաջ նախկինն է։ Եարօշի մօտերը թիւրքերը կորցրին 300 սպանված և 500 գերի, թողին 3 արագաձիգ թնդանօթ, 12 սայլ ռազմամթերքներով։ Կիրջալում բոլգարները ձեռք ձգեցին մի միլիոն փամփուշտ, 40 արկղ ռազմամթերք, 18,000 կիլօ ալիւր, 60,000 կիլօ հացահատիկ, 30,000 կիլօ գարի։ Մեստի բարձունքներում բոլգարները դրութեան տէրերն են։ Մէխոմիի շրջանում ոչնչացված է թիւրքական հեռեակ մի գունդ։ Մէխոմին շրջապատած մի ամբողջ բատալիոն, բաշիբոզուկների հետ միասին, հոկտ. 11-ին քաղաքը կամովին յանձնեց։ Օէխչէվոն բոլգարների ձեռքումն է։

—

Սուվայա Զագորա.—Հոկտեմ. 10-ին դէպի Սարում նահանջելով թիւրքերը հրդեհեցին եօթ գիւղ։

—

Ստարայա Զագորա.—Քրքիլիսէն վերցնելով, բոլգարները ազատ ճանապարհ բաց արին դէպի Յարգրադ։ Ադրիանուպոլսում թիւրքաց զօրքի մի մասը պաշարված է, միւս մասը, որ պաշտպանում էր Լօզէնգրադը, անկարգ փախաւ Բունարհիսար։

—

Լոնդոն (Ճեպընթաց). — Բէյտէրի գործակալութեանը հեռագրում են Սոֆիայից, որ բոլգարները Քրքիլիսէի մօտ գերի են վերցրել 50,000 թիւրքի և երկու փաշայի։ Ցիշեալ թիւը հաստատում է Բէյտէրի գործակալութիւնը, սակայն ուրիշ աղբիւրներից դեռ չէ ճշդվում։

—

Բէլգրադ.—Վուչիթրնը վերցրին սերբերը։ Գիլեանէն անձնատուր եղաւ սերբ կամաւորներին։ Կումանովոյում ձեռք ձգվեցին 10 գնդակացիրներ, 18 թնդանօթ, 19 արկղ ռազմամթերք։ Մուրադի և Լազար թագաւորի գերեզմանների մօտ գրվեցին պատուաւոր պահակախմբեր։

—

Բէլգրադ.—Նովի Բազարը իր շրջակայքով մուծվեց Նովօ-Բազարի սանջակը, որի կառավարիչ նշանակվեց նախկին մինիստր Իովանովիչը։

—

Վրանիա. — Ֆէրիզովիչին սերբերը վերցրին։

—

Բէլգրադ.—Երրորդ զօրաբանակը շտապով դիմում է Ուսկիւբի վրա և, եթէ լուրջ դիմադրութեան չը հանդիպէ, վաղը կը մտնէայ Ուսկիւբին։

—

Բէլգրադ.—Համաձայն պաշտօնական տեղեկութիւնների, առաջաւոր գնդերը արդէն Ուսկիւբի առաջ են։ Թիւրք իշխանութիւնները և բնակիչները շտապով հեռանում են քաղաքից։ Կումանովոյից հեռանալիս թիւրքերը մորթեցին ամբողջ քրիստոնեայ ընտանիքներ։

Երէկ բերին 1000 վիրաւորի։ դեռ բերելու են նորից 700 հոգու։

Ուսկիւբը վերցվեց։

—

Պետերբուրգ.—Ռուսաց նաւատորմը գրաւեց Լէմնոսը։ Զէզոք նաւերին թոյլատրված է դուրս գալ նաւահանգստից 24 ժամում։

—

Կ. Պոլիս.—Լուրերի համաձայն Եանինայի մօտերը կռիւ է սկսվել։

Ռուսաց ռազմի նաւատորմը երևաց Սալոնիկի ծոցում։

(Ճեպընթաց). Պաշտօնապէս հաղորդվում է, որ թիւրքաց արևելեան զօրաբանակը տակտիկական նկատումներով յետ է նահանջում։

—

Կ. Պոլիս.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ արևմտեան զօրաբանակը Կումանովոյի մօտերը ընդհարվեց սերբերի հետ, որոնք գահաժառանգի հրամանատարութեամբ էին։ Կատաղի կռիւից յետոյ սերբերը լիակատար պարտութիւն կրեցին և դիմեցին դէպի հիւսիս-արևելք։ Թիւրքաց զօրքերը հետապնդում են նրանց։

—

Կ. Պոլիս.—Ամեն օր գալիս են գերեվարքները վիրաւորներով։ Երէկ բերին 400 վիրաւորների։

Այդրն-Զմիւռնիա երկաթուղու տուն-նէլի մէջ անյայտ պատճառից զինուորական գնացքը երկու մասի բաժանվեց։ Զարդվեցին 18 վագոն, վիրաւորվեցին 300 զինուոր։

Զը նայած մահմեդական ոսկին, մինիստրների խորհուրդը խորհրդակցում է ուժեղ կազմով Հիլմի-փաշայի և Ֆէրիդ-փաշայի մասնակցութեամբ պատերազմի առիթով։

—

Ստարայա Զագորա.—Բոլգարական կարմիր Խաչը հրաւիրում է ցանկացող ռուս բժիշկների և ուսանող բժիշկների բոլգարական ծառայութեան ամսական 350 ֆրանկ ռոճիկով բժիշկներին և 300 ֆրանկ՝ ուսանողներին։

—

Սոֆիա. — Թիւրքական «Համիդիէ» ականանաւը երևաց Վառնայի առաջ և կէսօրին անյայտացաւ։

—

Սէրաէվօ.—Լրագիրները հաղորդում են, որ շատ թիւրք օֆիցէրներ փախել են սերբերի ձեռքից Բոսնիա, ուր զինուորական իշխանութիւնները նրանց զինաթափ են արել։

—

Ստարայա Զագորա.—Զէնքի կանչվում են, որ թիւրքերը կազմալուծված են, ստանում են վատ կերակուր, շարունակ հրդեհում են գիւղեր Սարամի ափերում։

Դրութիւնը Ադրիանուպոլսի առաջ նախկինն է։ Եարօշի մօտերը թիւրքերը կորցրին 300 սպանված և 500 գերի, թողին 3 արագաձիգ թնդանօթ, 12 սայլ ռազմամթերքներով։ Կիրջալում բոլգարները ձեռք ձգեցին մի միլիոն փամփուշտ, 40 արկղ ռազմամթերք, 18,000 կիլօ ալիւր, 60,000 կիլօ հացահատիկ, 30,000 կիլօ գարի։ Մեստի բարձունքներում բոլգարները դրութեան տէրերն են։ Մէխոմիի շրջանում ոչնչացված է թիւրքական հեռեակ մի գունդ։ Մէխոմին շրջապատած մի ամբողջ բատալիոն, բաշիբոզուկների հետ միասին, հոկտ. 11-ին քաղաքը կամովին յանձնեց։ Օէխչէվոն բոլգարների ձեռքումն է։

—

Սուվայա Զագորա.—Հոկտեմ. 10-ին դէպի Սարում նահանջելով թիւրքերը հրդեհեցին եօթ գիւղ։

—

Ստարայա Զագորա.—Քրքիլիսէն վերցնելով, բոլգարները ազատ ճանապարհ բաց արին դէպի Յարգրադ։ Ադրիանուպոլսում թիւրքաց զօրքի մի մասը պաշարված է, միւս մասը, որ պաշտպանում էր Լօզէնգրադը, անկարգ փախաւ Բունարհիսար։

—

Լոնդոն (Ճեպընթաց). — Բէյտէրի գործակալութեանը հեռագրում են Սոֆիայից, որ բոլգարները Քրքիլիսէի մօտ գերի են վերցրել 50,000 թիւրքի և երկու փաշայի։ Ցիշեալ թիւը հաստատում է Բէյտէրի գործակալութիւնը, սակայն ուրիշ աղբիւրներից դեռ չէ ճշդվում։

—

Բէլգրադ.—Վուչիթրնը վերցրին սերբերը։ Գիլեանէն անձնատուր եղաւ սերբ կամաւորներին։ Կումանովոյում ձեռք ձգվեցին 10 գնդակացիրներ, 18 թնդանօթ, 19 արկղ ռազմամթերք։ Մուրադի և Լազար թագաւորի գերեզմանների մօտ դրվեցին պատուաւոր պահակախմբեր։

—

Բէլգրադ.—Նովի Բազարը իր շրջակայքով մուծվեց Նովօ-Բազարի սանջակը, որի կառավարիչ նշանակվեց նախկին մինիստր Իովանովիչը։

—

Վրանիա. — Ֆէրիզովիչին սերբերը վերցրին։

—

Բէլգրադ.—Երրորդ զօրաբանակը շտապով դիմում է Ուսկիւբի վրա և, եթէ լուրջ դիմադրութեան չը հանդիպէ, վաղը կը մտնէայ Ուսկիւբին։

—

Բէլգրադ.—Համաձայն պաշտօնական տեղեկութիւնների, առաջաւոր գնդերը արդէն Ուսկիւբի առաջ են։ Թիւրք իշխանութիւնները և բնակիչները շտապով հեռանում են քաղաքից։ Կումանովոյից հեռանալիս թիւրքերը մորթեցին ամբողջ քրիստոնեայ ընտանիքներ։

Երէկ բերին 1000 վիրաւորի։ դեռ բերելու են նորից 700 հոգու։

Ուսկիւբը վերցվեց։

—

Պետերբուրգ.—Ռուսաց նաւատորմը գրաւեց Լէմնոսը։ Զէզոք նաւերին թոյլատրված է դուրս գալ նաւահանգստից 24 ժամում։

—

Կ. Պոլիս.—Լուրերի համաձայն Եանինայի մօտերը կռիւ է սկսվել։

Ռուսաց ռազմի նաւատորմը երևաց Սալոնիկի ծոցում։

(Ճեպընթաց). Պաշտօնապէս հաղորդվում է, որ թիւրքաց արևելեան զօրաբանակը տակտիկական նկատումներով յետ է նահանջում։

—

Կ. Պոլիս.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ արևմտեան զօրաբանակը Կումանովոյի մօտերը ընդհարվեց սերբերի հետ, որոնք գահաժառանգի հրամանատարութեամբ էին։ Կատաղի կռիւից յետոյ սերբերը լիակատար պարտութիւն կրեցին և դիմեցին դէպի հիւսիս-արևելք։ Թիւրքաց զօրքերը հետապնդում են նրանց։

—

Կ. Պոլիս.—Ամեն օր գալիս են գերեվարքները վիրաւորներով։ Երէկ բերին 400 վիրաւորների։

Այդրն-Զմիւռնիա երկաթուղու տուն-նէլի մէջ անյայտ պատճառից զինուորական գնացքը երկու մասի բաժանվեց։ Զարդվեցին 18 վագոն, վիրաւորվեցին 300 զինուոր։

Զը նայած մահմեդական ոսկին, մինիստրների խորհուրդը խորհրդակցում է ուժեղ կազմով Հիլմի-փաշայի և Ֆէրիդ-փաշայի մասնակցութեամբ պատերազմի առիթով։

—

Ստարայա Զագորա.—Բոլգարական կարմիր Խաչը հրաւիրում է ցանկացող ռուս բժիշկների և ուսանող բժիշկների բոլգարական ծառայութեան ամսական 350 ֆրանկ ռոճիկով բժիշկներին և 300 ֆրանկ՝ ուսանողներին։

—

Սոֆիա. — Թիւրքական «Համիդիէ» ականանաւը երևաց Վառնայի առաջ և կէսօրին անյայտացաւ։

—

Սէրաէվօ.—Լրագիրները հաղորդում են, որ շատ թիւրք օֆիցէրներ փախել են սերբերի ձեռքից Բոսնիա, ուր զինուորական իշխանութիւնները նրանց զինաթափ են արել։

—

Ստարայա Զագորա.—Զէնքի կանչ-

վեցին 1912 թուին ծառայութեան կոչվող երիտասարդները։

—

14 հոկտեմբերի

Աթէնք.—Կօչան դիմող հեծելազօրը գրաւեց Տօրտան, որ թողել էին թիւրք զօրքերը։

Հրամարակ հրատարակվեց կրետական վարչական կոմիտէի արձակման մասին։

Ռոյները գրաւեցին Ֆիլիպպիադան, Լուրօն, Էլեվտէրոկօրին և Պանտանասի մօտ գտնվող կամուրջը։ Երեկ. ժամը 7-ին Ստրէլից եկան թիւրքերը։ Յետ նահանջելով նրանք թողին մեծ քանակութեամբ ռազմամթերք։

Զօրքին հրամայված է պաշտպանել բնակիչների ապահովութիւնը առանց կրօնի խտրութեան։

Դէորգ թագաւորը երէկ եկաւ Լարիսա։

Ռունաց զօրքերը գրաւեցին Կօչանը։ Վէնիզէլօսի երկու որդին, որոնք կռւում էին զօրքերի շարքում, վիրաւորվեցին։

—

Յետինիէ.—Զերնոգօրցիք Նովօ-Բազարի սանջակում Սէնիցայի մօտերը հանդիպեցին սերբերի հետ։

Սկիւտարը այսօր թիւրքերը ռմբակոծեցին։

Թագաւորը մեկնեց կռւի դաշտը բալկանեան պատերազմների դեսպանների, գեներալ Ադանացկովիչի և Աւստրիայի ու Իտալիայի զինուորական գործակալների հետ։

Տարաբօշը թիւրքերից ռմբակոծվում է։

—

Բէլգրադ.—Գալիս են սանիտարական խմբեր։

Գահաժառանգը զօրքի գլուխն անցած գրաւեց Ուսկիւբը։ Այստեղ անհամարագրելի ցնծութիւն է։ Քաղաքի փողոցները զարդարված են դրօշակներով։

Զէքի-փաշայի զօրքերն անկարգ նահանջում են դէպի Վելէս։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ չորրորդ զօրաբանակի գնդերը միացել են գեներալ Վուկոտիչի չերնոգօրցիների զօրամասի հետ։

Ուսկիւբը վերցնելու առիթով համակրական ցոյցեր եղան ռուսաց և դաշնակիցների դեսպանատների առաջ։

—

Կ. Պոլիս.—Բ. Դրան շրջաններում հաւատացնում են, թէ թիւրքաց զօրքերը յետ են քշել բոլգարներին Քրքիլիսէից։

Պալատում խորհրդակցութիւն է մինիստրների, ուլէմների, Հիլմի-փաշայի, բարձրաստիճան պալատականների մասնակցութեամբ։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ թիւրք զօրքերը հերոսական դրոհից յետոյ չարդել են յոյներին Գրիբօվի մօտերը։

Կոնտրաբանդ են յայտարարված զէնքը, ռազմամթերքը, վառօդը, քիմիական նիւթերը, արճիճը, կաւը, զինուորի զգեստը, կօշիկը, թամբը, պայտը, վրանները, սայլերը, օդապարիկները, աէրօպլանները և ձիերը։

Օսմանեան գործակալութիւնը տեղեկացնում է, որ թիւրքաց զօրքերը գտնվում են Քրքիլիսէից դէպի հարաւ-արևելք։

Պալատում հոկտ. 13-ի արտակարգ խորհրդակցութեան ժամանակ որոշվեց ամեն միջոցներով պաշտպանել զինուորական պրէստիժը։

Ադրիանուպոլսից և Քրքիլիսէից եկան 2500 կին, ծերունի և երեխայ։

Աւստրօ-Ունգարիան համաձայնութիւն տուեց նշանակելու Հիլմի-փաշային թիւրքաց դեսպան Վիէննայում։

—

Սոֆիա.—Բոլգարական գործակալութիւնը հերքում է թիւրքերի այն տեղեկութիւնները, թէ բոլգարները հրդեհել են թիւրքաց հողի վրա մահմէդականների գիւղերը և գազանութիւններ են գործ դրել ազգաբնակութեան վրա։ Հրդեհներն ու գազանութիւնները կատարել են թիւրքերը նահանջման ժամանակ։ Բոլգարների պարտութեան և թիւրքերի յաղթութեան մասին թիւրքաց տեղեկութիւնները մտացածին են։

Բերլին 300 թիւրք գերիների։

Թագաւորը հեռագրով գովեց Քրքիլիսէի վերցնող զօրքերի և օֆիցէրների քաջութիւնը։

Կահիրէ.—Եկան Նիազ-բէյը և Էնվէր բէյը։

—

Փիլիպպոլ.—Լօզէնգրատի առման ժամանակ բոլգարները ձեռք ձգեցին 39,000 գերիների, որոնց մէջն են պրինց Աբդիլ-Խալիլը և Մահմուդ-Մուխթար փաշան։ Վերցված է նաև մեծ քանակութեամբ թնդանօթ, հրացան, ռազմամթերք։ Բոլգարների կորուստները չափազանց խոշոր են։

—

Վրանիա.—Կումանովոյի տակ կռիւը սկսվեց առաւօտեան։ Թիւրքերը սերբերի դրոհից դիմեցին փախուստի դէպի Ուսկիւբ, թողնելով մի քանի թնդանօթ և շատ մթերք։

Այստեղ բժիշկներ են անհրաժեշտ։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 և 14 հոկտեմբերի

Լոնդոն.—Ի նկատի ունենալով սպասվող վճռական ճակատամարտերը, մեծ պետութիւնները մտքերի փոխանակութիւն են կատարում և, լուրերի համաձայն, եկել են համաձայնութեան՝ խափանել Եւրօպայում բարդութիւններ առաջ գալու հնարաւորութիւնը բալկանեան պատերազմի պատճառով։ Բէյտէրը հաղորդում է, որ դաշնակիցները ամբողջ աշխարհից պահանջելու են ձայն չը տալ Թիւրքիային Մակեդոնիայում։ բալկանեան համաձայնութիւնը ժամանակաւոր միջոց է, որ հետամուտ է Բալկանները պաշտպանելու բալկանեան պետութիւնների համար։ Բալկանեան դաշնակցութիւնը արգելարգելիթ է գերմանական նուաճման։ Եթէ մեծ պետութիւնները անկարող եղան դրդել Թիւրքիային կատարել Բերլինի դաշնագրի սոսկ մի յօդուածը, ապա ուրեմն անհամեմատ դժուար է հարկադրել բոլոր բալկանեան պետութիւններին հրաժարվել արիւնի ու դրամի խոշոր զոհաբերութիւններով ձեռք բերածից։

—

Աթէնք.—Մեծ պետութիւնների միջամտութեան հնարաւորութեան առիթով Վէնիզէլօսը ասաց մամուլի ներկայացուցիչներին. «Եթէ մեծ պետութիւնները իրանց առաջարկութիւնները ներկայացնեն բալկանեան պետութիւնների քննութեան և եթէ դրանք համակերպվեն դաշնակցութեան սրբազան նպատակին, այն դէպքում մենք կընդունենք այդ առաջարկութիւնները»։

—

Սոֆիա.—Պաշտօնական «Միրը» յայտնում է, որ եւրօպական միջամտութեան համար բալկանեան պատերազմում այժմ, երբ բալկանեան պետութիւնները իրանք են յանձն առել պաշտպանելու իրանց շահերը, հիմք չը կայ։

—

Պարիզ. — Հասարակական կարծիքը դաշնակից բալկանեան պետութիւնների յաղթութիւնը ընդունում են դրութիւնը արմատապէս փոփոխող Բալկանում։ Սակայն լրագիրները կարծում են, որ դեռ վաղաժամ է խօսել Թիւրքիայի լիակատար, պարտութեան մասին և ակնարկում են, որ status-quo-ի փոփոխութիւնը կարող է առաջ բերել եւրօպական բարդութիւններ։

—

Վիէննա.—Լրագիրները կարծում են, որ բալկանեան դաշնակից պետութիւնների նորանոր յաղթութիւնից յետոյ բալկանեան status quo-ի մասին խօսք այլ ևս լինել չէ կարող։

—

Վիէննա. — Դաշնակից պետութիւնների յաղթութեան առիթով մամուլը ընդգծում է դաշնակիցների զինուորական արժանապատուութիւնը և Թիւրքիայի զինուորական հզօրութեան լիակատար անկումը։

ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԿՈՒՌՈՂՆԵՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 և 14 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Կարմիր Խաչի ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը թոյլատրեց զլխաւոր վարչու-

թեանը վերցնել պահեստի դրամագլխից մի միլիոն ռուբլի բալկանեան զօրքի հիւանդ և վիրաւոր զօրականներին օգնելու համար։

—

Օդեսսա.—Բոլգար պահեստիները շարունակ դիմում են հայրենիք։

Ռուսաց հիւպատոսարանը ստացաւ 25,000 ր. նուէր։

—

Բէլգրադ.—Եկաւ Կիեվից սանիտարական մի խումբ 50 մահճակալներով։

—

Ալէքսանդրիա.—Մինչև երէկ մեկնել են 6500 յոյն պահեստիներ։

Սոֆիա.—Եկաւ աւստրիական սանիտարական մի խումբ պրոֆ. Կլէմօնի առաջնորդութեամբ։

—

Կահիրէ.—Խեդիվի ընտանիքը 77,000 ր. նուիրեց Եգիպտոսի Կարմիր Կիսալուսնին։

—

Բուդապեշտ.—Արևմտեան Ունգարիայում իշխանութիւնները բռնել են Գերմանիայից Բոլգարիա ուղարկվող 3 վագոն վառօդ։ Շիլինում բռնվել են մի քանի վագոններ։

—

Կոպենհագէն.—Դանիական կառավարութիւնը յայտարարեց իր չեզոքութեան մասին։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12 հոկտեմբերի

Բերլին.—«Ֆոսիշէ-Ցայտը» իտալական տղբիւրներից հաղորդում է, որ Բերխտօլդի և Սան-Ջուլիանօյի միջև կայացել է համաձայնութիւն միակերպ գործելակերպ ունենալու ընդհանուր շահերը Ալբանիայում և նրան մերձակայ շրջաններում պաշտպանելու համար Թուրքիայի զինուորական հզօրութեան անկման դէպքում։

—

Վիեննա.—Կայսրը ¾ ժամով ունկնդրութեան ընդունեց Բերխտօլդին, որ զեկուցեց Իտալիա կատարած ճանապարհորդութեան մասին։

—

Հռոմ.—Սլաւոն զէնքի յաղթութիւնները կենդանի արձագանգ են գտնում քաղաքական և պարլամենտական շրջաններում։

—

Նեսնտ.—Ի պատիւ Պուանկարէի տրված խնճոյքում Պուանկարէն իր ճառի մէջ յիշեց, որ Ֆրանսիական կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում բալկանեան պատերազմը չեզոքացնելու համար. հետևանքում այժմ մտքերի փոխանակութիւն է կատարվում մեծ պետութիւնների միջև, սակայն այդ բանակցութիւնները չեն փոխի Ֆրանսիական քաղաքականութեան հիմնական հոսանքները, որոնք յենվում են Ռուսաստանի դաշնակցութեան և Անգլիայի բարեկամութեան վրա։ Ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է, ունենալով մեծագոյն համբերութիւն, խնայել ժողովրդի բովանդակ եռանդը, ժողովրդի, որ պատերազմ չէ կամենում, բայց չէ վախենում նրանից։

—

Հռոմ.—Սան Ջուլիանոն դիւանապետի հետ հոկտ. 20-ին մեկնում է Բերլին՝ պատասխանատու գործելու Կիդերլէն-Վեխտէրին։

ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ԱՐՔԱԳԱԶԻ ՏԿԱՐՈՒԹԻՒՆԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 և 14 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Պաշտօնական։ Բիւլլետէն Գահաժառանգի առողջութեան դրութեան մասին հոկտ. 13-ից երեկ. ժամը 7-ին. «Օրը Նորին Մեծութիւն Գահաժառանգ Արքայորդին անցրեց այնպէս լաւ, ինչպէս երեկ։ Տաքութիւնը ցերեկով 38,2, երեկ. 38,1, զարկերակը 128»։ Ստորագրեցին պալատական բժիշկներ Բաուխֆուս, պրոֆ. Ֆէօդորով, Բոտկին և Օստրոգորսկի։

—

Պետերբուրգ.—Պաշտօնական։ Բիւլլետէն Գահաժառանգի առողջութեան մասին հոկտ. 14 ից երեկ. ժամը 7-ին. «Նորին Կայսերական Մեծութիւն Գահաժառանգ Արքայազնը օրը լաւ անցրեց։ Ընդհանուր դրութիւնը լաւանում է։ Տաքութիւնը ցեր. 37,8, երեկ. 37,9, զարկերակը 120»։ Ստորագրեցին պալատական բժիշկներ Բաուխֆուս, Բոտկին և Օստրոգորսկի։

—

Բէլգրադ.—Կատարվեց մաղթանք պաշտօնական անձանց ներկայութեամբ Գահաժառանգի առողջութեան համար։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 հոկտեմբերի

Թաւրիզ.—Նորից վաճառականները և հոգևորականութիւնը ժողովներ են գումարում և պնդում են Մահմէդ-Ալիի վերադառնալու վրա։ Ուղարկվեցին հեռագիրներ նրան վերադարձնելու խնդիրքով։

Ղարադաղում, ռուս զօրքերի մեկնելուց յետոյ, կողոպուտները վերսկսվեցին խաների մասնակցութեամբ։

—

Թէհրան.—Սալար-ուդ-Դովլէն Շէհրիստանէկից դիմեց դէպի հիւսիս և մտադիր է անցնել Մազանդարան։ Նա ունի 420 զինված մարդ։ Հնարաւոր է, որ նրան միանայ կառավարութիւնից դժգոհ Սիփէհդարի որդի Էմիր-Ասադը և Խոջէվանի հեծելազունդը։

—

Լոնդոն.—Գրէյը պարսկական գործերի մասին ասաց. «Թէև մենք հնարաւորութիւն ունենք, նկատի առած մեր առևտրական շահերը, մեր ձեռքը վերցնել կարգուկանոնի վերականգնումը Պարսկաստանի հարաւում, սակայն այդ կարող է լինել մի բժշկութիւն, որ ընդունակ է առաջ բերել ևս առաւել լուրջ հետևանքներ, քան առևտրի քայքայումը։ Միակ բանը, որ մենք կարող ենք, այդ օգնելն է պարսիկ կառավարութեանը իր ընդգծած միջոցները գործադրելու»։

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱՐԻԿՆԵՐ

—

✦ Առաջնորդ Շահէ վարդապետը Պոլսոյ մէջ իր դիմումները կը շարունակէ ազգ. պատրիարքարանի միջոցաւ կառավարութեանքով, որպէսզի դէպքերէն հաք առևտրականաց եղած 100,000 ոսկիի փոխարինութեան գանձումը յետաձգուի և միանգամայն արուին աւերեալ եկեղեցեաց և վարժարանաց յատկացուած պետական նպաստները։

Շահէ վարդապետը կը պահանջէ նաև, որ Հասան-Բէյլիի եկեղեցին նորէն պետական դրամով շինուի իր քանդուած տեղւոյն վրայ, արուած ըլլալով որ անոր ռազմական դիրքին խնդիրը Զէյմալ բէյին երևակայութեան մէկ ճիւաղ ցնորքէն էր լոկ։

Կը պահանջէ նաև, ոչ նուազ իրաւունքով, որ իրեն կամ, որ նոյնն է, ազգին յանձնուին Ադանայի օսմանեան որբանոցին վարչութիւնը և այդ նպատակաւ շինուած հոյակապ որբանոցի շէնքը, որ նոյնպէս Զէյմալ բէյ ծրագրած և հաստատած էր որբերուն օսմանցիական հարազատ կրթութիւն մը տալու նախանձախնդրութեամբ։

Շահէ վարդապետը պիտի պահանջէ անշուշտ, որ վճարուի նաև որբանոցաց յատկացուած 10,000 ոսկին, որուն խոստումը կայ, իրականութիւնը չկայ, մինչ անդին ազգային որբանոցները կատարեալ ճգնաժամ մը կանցուցեն նիւթական ծանր անձկութեան մը երեսէն։

Շահէ վարդապետ դիմած է նաև ֆրանսական դեսպանին՝ խնդրելով իր միջնորդութիւնը, որպէս զի ապահովագրական ընկերութիւնը վճարեն Ադանայի դէպքին այրած տուներուն արժէքը։

✦ Վեհ. կաթողիկոսը, որ այժմ Սիս, իր աթոռը, կը գտնուի, մտադիր է աշխատ Ադանա և Մերսին այցելել, ուրկէ մինչև Սիլէֆքէ պիտի երթայ։

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի մտադրուած էր միւռոնօրհնութիւն ընել Սիս, և որ ապա պատերազմին պատճառաւ յետաձգուեցաւ։ Եթէ մինչև աշունն խաղաղութիւն կնքուի և երկրին վիճակը համեմատական անդորրութիւն մը դրնու, վեհափառը մտադիր է միւռոնօրհնութիւնը կատարել, որովհետև միւռոնը հատած է։ Ապա թէ ոչ, Նորին սուրբ օծութիւնը մտադրած է Էջմիածնի Ընդհանրական Սրբազնագոյն Հայրապետէն խնդրել միւռոնը, մինչև որ ինքը պատեհութիւն ունենայ օրհնելու։

Վեհափառի այս մտադրութիւնը անկամ մըն ալ—հարիւրաւոր նման ապացոյցներէ ետք այլ ևս աւելորդ—ցոյց կուտայ իր լայնախոհ վերաբերումը դէպի յարաբերական խնդիրը և իր մտածութիւնը հանդէպ Էջմիածնի, երբ անդին, կարծէք, երդում ըրած ըլլան մինչև իսկ անտեղի և անիմաստ պառակտումներու ի գլուխ, երևակայական իրաւունքներէ նշանախեց մը վրայ չը տալու նախանձայուզութեամբ իրաւախոհութեան ամեն դուռները գոցելու։

Ինչու և որուն դէմ։ Այն, որ Էջմիածինը անտեսել կուզէ, իրեն պէս և չափ հայ և Հայաստանեայց Եկեղեցւոյն չի պատկանիր։

✦ Այս շրջանէն սկսեալ Այնթապի մէջ բացուեցաւ Վարդանեան և Եկեղեցասիրաց ընկերութիւններու նախաձեռնութեամբ բարձրագոյն վարժարան մը։ Ուսուցիչներէն մէկ քանին Ամերիկայի համալսարաններէ եկածներ են։

Յայտագիրը, որ ունիմ աչքիս առաջ, բաւական մեծ խոստումներ ունի, ուրեմն կը մնայ սպասել ատեն մը զինք դատելու կամ քննադատելու համար։

Այնթապ իր բնակչութեան չափով քիչ եկեղեցի, բայց շատ դպրոց ունեցող հայաքաղաքն է Կիլիկիոյ մէջ։ Շատ՝ կրսենը, որովհետև առանց զրկանքի կարելի էր նուազեցնել թիւը այդ վարժարաններէն մէկ քանիին, միացնելով անոնց ուժերը և ջանքը դպրոցաց բարելաւման և աղէկ մատակարարութեան տեսակէտով։

Երկու ընդդիմադիր ուժեր հոն, Աղինական և Վարդանեան, ստատուած իւրաքանչիւրը նաև մէկ-մէկ քաղաքական կուսակցութեամբ, փոխանակ դպրոցնուն ուժ տալու, զիրար չէզոքացնելու և զիրար տկարացնելու տուած են ինքզինքնին։

Այնու ամենայնիւ աչքի առաջ ունենալով պրոֆ. Պէդճեանեանցու մոլեռանդ շունչն ներքև Այնթապի բողոքական հասատատութեանց, վարժարաններու և կօլէժին հակատոմիկ կրթութիւնը, որ կը պէտ կանցնի մինչև իսկ ամենամոլի կաթոլիկ վարդապետութիւնը, մենք ուրախ ենք, որ այնթապցի մերայինք իւրովհանն ճիգ մը կընեն կրթական ձերբազատութեան և անկախ վարժարանական ուղղութեան մը հիմքը դնելի հոն, ուր եթէ կարենան յարատևութիւն մտցնել, ինչպէս և մեթոդ ուսկրգապահութիւն, վարժարանը միայն վարժարան պահելու համար, օգտակար գործ մը կատարած պիտի ըլլան։

✦ Ամսոյս մէջ կը հաւաքուին Միացեալի վարչութեամբ և Հ. Բ. Ընդհ. Միութեան նպաստով բացուած Դէօրթ-Եօլի կիլիկեան որբանոց-վարժարանի 100 որբ աշակերտները։

Փութով լրացուելու վրայ են՝ այսպէս նորահաստատ շինութեան մը կիր անհրաժեշտ շատ մը պակասները։

Աւելի շուտ չձեռնարկուեցաւ որբերու հաւաքումին՝ Դէօրթ-Եօլի մէջ ճարական քոլերային պատճառաւ, որ վերջերս նորէն սաստկանալ սկսաւ։

Ալ, ինչպէս կերևի, այս հիւանդութիւնը մնայուն ցաւ մը եղաւ Կիլիկիոյ համար։ Իրաւ է, թէ սատիկ և մեծատարած չէ, սակայն վերջանալու և անհետանալու երեսալ չունի։

Մի-Նա

ԱՆԴՈՒՆԴԻՑ ԱՆԴՈՒՆԴ

—

Թերսին, 19 սեպտ.

«Շնորհիւ վեհ. սուլթանի, խաղաղութիւնն ու հանգստութիւնը կատարեալ է և կարգապահութիւնը իր տեղը»։

Այո, շնորհիւ օսմանեան կառավարութեան ներկայումս Վասպուրականի ժողովուրդը ահաբեկված՝ իր գաղթն սկսել է դէպ Ատանտեան ովկիանոս, դէպ Ամերիկա, անդունդից անդունդ գլորվելու համար։ 1895—96 թ. հանրային կոտորածների նախօրեակին էր, երբ Թիւրք Թերթերում կարդում էինք յիշեալ տողերը և քմծիծաղով իրար երեսի նայում... Վայ անիրաւ կառավարութիւն, վայ. ընդհանուր երկիրը սրի ու կրակի տակ էր մաշվում, բայց ինքը դեռ լերը ու կեղծաւոր հրատարակումներից ձեռք չէր կամենում վերցնել։ Եւ լուրջ մտածող թիւրքերն անգամ պախարակում էին այդ սխտեմը։ Այժմ էլ հեռագիրները, պաշտօնական թղթերը օրը օրին հասնելով կենտրոն, Կ. Պոլիս, երկրի ողբերգական վիճակը ցաւալի կերպով տեղեկացրում են, և տակաւին օսմանեան կառավարութիւնը պատահական երևոյթների կարգն է դասում զեկուցված այդ բրոնութիւնները և փարիսեցիական տոնով յուսադրում է հայոց պատրիարքին՝ եթեթիհականների և եթիլաֆականների միջև եղած պայքարի արդիւնք համարելով ժամանակակից խլրտումները։

Հայ ազգը, հայոց պատրիարքարանը հազար ու բիւր անգամ են լսել խոստումներ և այդ խոստումների տակ իսկ տարել են անակնկալների մի շարք թշուառութիւններ, սակայն ի զուր։

Հողային հարցը մի պատրուակ է։ Քիւրդերը չեն, որ հեռաքրքրվում են այդ հարցով և անհրաժեշտ պահանջ են դրել, այլ ինքը պաշտօնական կառավարութիւնն է, որ ապագայ մահմեդական զաղթականներին պատրաստի հող և տուն ու տեղ է պատրաստում։

Մենք լաւ ենք ճանաչում քիւրդերին։ Այդ թոյլ, ապիկար ու ծոյլ տարրը գանասար գայլի նման է, պարապ ժամանակ է որոնում, երբ ոչխարն առանց հովիւի և պահպանողի է. հակառակ դէպքում նա վախկոտ է որպէս աղուէս։ Փորձերը ցոյց են տուել, որ 20 քիւրդի դէմ կանգնող 5 հայն՝ աւելի յաղթող է գտնվել, զինաթափ արել և այլն։

Մեր առաջին յօդուածում («Մշակ» № 207) մատնանշել էինք կարիքը՝ համայնական ոյժով կանգնելու վտանգի առաջ։ Նոյնը կրկնում ենք այժմ։ Համայնական, ժողովրդական կազմակերպութիւն է պէտք։

Թիւրքահայերին տիրապետող, իշխող տարրը ֆանատիկ, մոլեռանդ մի զանգուած է։ Մօնղոլը, թաթարը, սելջուկը, քիւրդը և դրանց վրա աւելացած չերքէզը միահամուռ մի զանգուածի տարրերն են, մասնիկներն են։ Դրանցից ամեն մէնը, ինչպէս և բոլորը միասին՝ միահամուռ՝ անընդունակ են կուլտուրայի, քաղաքակրթութեան, հպատակ օտար տարրը, ոչան նրանց առաջ ոչ մի նշանակութիւն չունի. նա սարուկ է և սարուկ պիտի մնայ։ Այս է նրանց աշխարհահայեացքը, և պաշտօնական կառավարութեան բարենորոգումների մասին արած խոստումները սպանիչ դատարկ փամփուշտներ են։ Ուստի պէտք է զիմումներ անել մեծ պետութիւններին, ի մասնաւորի՝ սահմանակից տէրութիւններին՝ հովանաւորելու մեր թիւրքահայ եղբայրներին և թոյլ չը տալու կրկնութիւնը 1895—96 թ. հանրային կոտորածների։

Խարուսիկ են այն խոստումները, որ Վանի և Բիթլիսի նորընտիր վալիները շռայլել են զեռ Կ. Պոլսում եղած ժամանակ։ Վալիները չեն, որ պիտի զսպեն քիւրդ ու թիւրք խուժանին, ֆանատիկ շէյխին ու ըէկերին, այլ վերին հրամանը։ Այդ հրամանը շատ անգամ եղել է երկդիմի, անդործադրելի կամ առօրեայ։ Եւ ահա ես վախենում եմ, որ մենք կրկին ստիպված լինենք կարդալու սովորական «խաղաղութիւնը կատարեալ է» դարձուածքը, բայց հրի ու սրի մատնված ժողովուրդն էլի նոյն յուսահատական վանդգի առաջ՝ գլուխը կորցրած՝ սկսի իր գաղթը։

Վերջերս Թիւրքահայաստանից պանդխտողները նոյն յուսահատական վիճակն են պատմում. կոտրածի ուրուական, ահ ու սարսափ՝ պատել է նրանց. սէյիդները, Միր Մէհէրը և նրանց նմանները շարունակում են իրանց գործը. այս անգամ էլ ժողովրդի գաղթն սկսել է դէպի Ատլանտեանի ափերը, դէպի Ամերիկա։

Գ. Շէրենց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՑԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ ԵՒ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

—

(Սեփ. հեռագիր)

Էջմիածին, 15 հոկտեմբերի

Հայ տպագրութեան 400 ամեակի և հայ տառերի գիւտի 1500-ամեակի տօնակատարութիւնը կրում էր հանդիսաւոր բնոյթ։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Վ-ը, միաբանները և պատգամաւորները շաբաթ օրը, հոկտեմբերի 13-ին, գնացին Օշական, ուր և գտնվում է ս. Մեսրոպի գերեզմանը։

Հանդիսաւոր պատարագից յետոյ 3000-ից աւելի ժողովրդի ներկայութեամբ բացօդեայ կատարվեց տօնահանդէսը։

Կաթողիկոս Գէորգ V բացված համարելով համազգային մեծ տօնի յօբելեանը՝ բացատրեց Մեսրոպի գիւտի ունեցած ազդեցութիւնը հայերի կուլտուրական զարգացման վրա։

Ճառեր խօսեցին Կանայեան, Ալ. Քալանթար, Թորոսեան։

Օշականցիների կողմից հանդիսականները հիւրասիրվեցին նախաճաշով։ Կենացներ առաջարկվեցին Հ. Առաքելեանի, Ե. Շահազիզի, Կարապետ եպիսկոպոսի, Մաքսուտեան վարդապետի, Ստ. Մալխասեանցի, Մանդակունի քահանայի և Այվազեան արքեպիսկոպոսի կողմից։

Կիրակի, հոկտեմբերի 14-ին, Էջմիածնում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ գրի և տպագրութեան հանդուցեալ վաստակաւորների յիշատակին։ Իսկ այդ օրը երևկոյեան Գէորգեան ճեմարանում տեղի ունեցաւ գրական երեկոյթ Կաթողիկոսի ներկայութեամբ։ Երեկոյթից յետոյ տրվեց ընթրիք։

Ստացված են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ զանազան քաղաքներից և հիմնարկութիւններից։

Դպրոցական ֆոնդի օգտին Էջմիածինը նուիրաբերել է 15,000 ռուբլի։

Սղազդեան

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1500-ԱՄԵԱՅ ԵՒ 400-ԱՄԵԱՅ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԻ

—

Վաղարշապատ, 12 հոկտեմբերի

Այսօր երևկոյեան Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր թափօրով իջաւ Մայր Տաճար։ Նախ աղդարարը և երբորդ կոչված զանգը հրաւիրեցին միաբանութեանը եկեղեցի։ Միաբանութիւնը գլուխ ունենալով Սուքիաս արքեպիսկոպոսին, շուրջառ առած՝ խաչով, խաչվառով ու ջերմներով գնաց ընդառաջ Վեհին՝ եկեղեցի առաջնորդելու։ Ճեմարանի աշակերտները վեհարանի դարպասից մինչև զանգակատունը երկկարգ պատնէշ էին կազմել, որի միջով անցաւ Վեհը։ Վեհի ամպովանին կրում էին չորս քահանաներ, իսկ խնկարկում էին երկու վարդապետներ։ ամպհովանու առաջից տանում էին կաթողիկոսական քղոր ճեմարանի երկու աշակերտներ։ «Հրաշափառ» շարականի և զանգակների հնչիւնի տակ Վեհափառը իջաւ տաճար և իջման սեղանի առաջ լուսարարապետ Դաւոնդ եպիսկոպոսի հետ ասացին որոշ աղօթքներ։

Ժամերգութիւնից յետոյ շուրջառով Վեհին բոլոր միաբանութիւնը առաջնորդեց վեհարան։

Ինչպէս իմացանք, ամսոյս 16-ին, երեքշաբթի օրը, լինելու է եպիսկոպոսական ձեռնադրութիւն։ Ձեռնադրվելու է Թիւրքիայից եկած Բալուի առաջնորդ Եղնիկ ծ. վ. Կալպակեանը և Ռուսաստանից՝ Մայր Աթոռի հիւրընկալ Սիոն վ. Տէր-Մանուէլեանը։

Այս երեք օր է ինչ Էջմիածին են եկել դպրոցական մշտական ծրագիր կազմելու համար՝ Ցովսէփ Խունունց—Ներսիսեան դպ. հոգաբարձութեան կողմից, Իսահակ Ցարութիւնեան—Ներսիսեան դպ. կողմից, Ստ. Մալխասեանց—Ցովհաննեան դպ. կողմից, բժ. Եարամիշեանց—Շուշու թեմ. դպ. կողմից, Արշ. Զիլինգարեան և Զուբեան—Երևանի թեմ. դպ. կողմից, Երևանի թեմ. դպ. հոգաբարձութեան կողմից- Գր. Տէր-Մաչարեան, Ե. Շահազիզեան—Նոր-Նախիջևանի թեմ. դպ. կողմից։ Ժողովները լինում են օրը երկու անգամ, առաւօտեան և երեկոյեան, մատենադարանի նոր շէնութեան մէջ։ Ինչպէս իմացանք, հաւիւ վերջացնեն ամսոյս 17-ին, այն էլ ոչ լրիւ։ Այդ տեսակ մի լուրջ խնդիր ի հարկէ չէր կարելի մի քանի օրում վերջացնել, այլ պէտք է ամենաքիչը մէկ ամիս տևէր։ Արդեօք լաւ չէր լինի, որ օգոստոսի 10—15-ից սկսէին և վերջացնէին սեպտեմբերի 10—15-ը, որ ոչ դպրոցները կը տուժէին և ոչ էլ շտապ և թերի կը կատարվէր։ լաւ է մի փոքր ուշ և լաւ ու հիմնովին վերջանար, քան թէ շուտ և կիսատ-պռատ։

Վաղը ամսոյս 13-ին ս. Թարգմանիչների ուսի տաղթով Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր շքերթով կը լինի Օշական ուղեկցութեամբ բոլոր միաբանութեան և պատգամաւորների։ Նախ կը կատարվի պատարագ ս. Մեսրոպի գերեզմանի վրա և ապա հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ կը լինեն պատգամաւորների բանախօսութիւններ, հեռագիրների և ուղերձների ընթերցումն ս. Մեսրոպի եկեղեցու բակում։ Հանդէսի մասնամասնութիւնը կը հաղորդեմ վաղը։

Վահան ք. Աղազադեան

ԷՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀԱՆԱՑ ՆԱԶԱՐԵԱՆՑ

—

Հեռագիրը, թէև ուշ, զուժեց մի յարգելի անձի՝ Էմմանուէլ քահ. Նազարեանի մահը, որ տեղի է ունեցել Մոսկվայում, հոկտեմբերի 12-ին։

Հանգուցեալը ծանօթ անձնաւորութիւն է Թիֆլիսի հայ հասարակութեան։ Նա միաբան էր Ս. Կարապետ եկեղեցում և շնորհիւ իր խելացի քարոզների շատ շուտով գրաւեց իր ունկնդիրների սէրն ու համակրանքը։

Սակայն այդ ժամանակվայ հայ քահանայական դասը հանդիստ չը մնաց, երբ տեսաւ, որ հոգևորականի զգեստ հագած մի մարդ փաստերով մերկացնում է հայ հոգևորականութեան պակասութիւնները։ Սկսվեց հալածանք Նազարեանցի դէմ, որ չընկճվեց և շարունակեց իր քարոզները հրատարակել «Պարզ քարոզներ» խորագրով գրքոյկներով, որի մէջ նկատվում են հեղինակի առողջ դատողութիւնները։

Հանգուցեալը բացի իր «Պարզ քարոզներ» գրքերից յայտնի է և իր մանկավարժական գրուածքների ժողովածուներով, որոնցից շատ գործնական է «Ընտիր հատուածները»։

Տարիներ առաջ Մոսկվայի հայութիւնը պէտք ունեցաւ մի ինտելիգենտ քահանայի և բոլորի ուշադրութիւնը կենտրոնացաւ հանգուցեալի վրա։ Էմմանուէլ քահ. Նազարեանց հրաւիրվեց Մոսկվա հովիւելու այնտեղի հայ հօտը։ Այդտեղ էլ նա ձեռք բերեց լայն ժողովրդականութիւն։

Հանգուցեալը Մոսկվայից պարբերաբար աշխատակցում էր «Մշակին»։

Մի կրթված հոգևորական և լաւ մարդ ևս պակասեց հայ եկեղեցականներից։

Յաջորդ անգամ կը տանք կենսագրական տեղեկութիւններ հանգուցեալի մասին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Ինչպէս յայտնի է, հոկտ. 14-ին Թիֆլիսում նշանակված էին կրկնաքուէարկութիւններ Պետական Դումայի պատուիրակներ ընտրելու համար, ռուսական կուրիայից և ընդհանուր կուրիայից քաղաքի III ընտրողական բաժնում։

Երէկ, հոկտեմբերի 15-ին ուրախվեց ձայների հաշուելը. ռուսական կուրիայում ձայների ճնշող մեծամասնութեամբ յաղթանակ են տարել պրոգրեսիստները, որոնք ստացել են 1120, ազգայնականները՝ 424, հայրենասէրները՝ 287, կաղարինցիները՝ 69 և դեկիստները (չէզոքները) 29 քուէ։

Ընդհանուր կուրիայում, քաղաքի III ընտրող. բաժնում, որը կատարվում էր Մ.Ն. Աթաբէգեանի նախագահութեամբ, պրոգրեսիստները, որոնք պայքարում էին սոցիալ-դեմոկրատական թեկնածուների դէմ, անցան 50 ձայների առաւելութեամբ։ Հակառակ նախկին 1179 ընտրողների, այս անգամ մասնակցեցին ընդամենը 763 հոգի, որոնցից ապօրէն ճանաչվեցին 8 քուէ. մնացեալ 755-ից ձայների մեծամասնութիւն ստացան պրոգրէսիստների թեկնածուները—Ցովսէփ Խունունց՝ 402 ձայն, Գ. Մ. Թումանեան՝ 399 և բժ. Գ. Ն. Ստեփանեան՝ 396 ձ., հակառակորդ կողմի թեկնածուներից՝ Գաբր. Կաֆիեան՝ 350 ձայն, Հասան Զադէ՝ 350 ձայն և Խ. Ս. Վարդանեան՝ 345 ձայն։ Այդպիսով ընտրված են համարվում առաջին երեքը։

Ի միջի այլոց ընտրողական քուէների մէջ թէ ընդհանուր (III բաժնում) և թէ ռուսական կուրիայում տրվել են հետևեալ մի-մի ծիծաղաշարժ բովանդակութեամբ թերթիկները։ III-րդ բաժնում ընտրողներից մէկը գրում է հետևեալը. առաջարկում եմ՝

1) Էքս-շահ Ալի-Մահմէդին—Արդաբիլի մօտ բանակատեղիում։

2) Թիւրքիայի էկս-սուլթան Արդիւլ-Համիդին. հացէն տեղեկանալ երբոտասարդ-Թիւրքերից։

3) Իմ շէֆ-խոհարար Մելիսոն Զօխօխբիլաձէին, որ շատ հիանալի պատրաստում է «վերմիշէլ» ամեն տեսակ սոուսով։

Ռուսական կուրիայում մի ընտրողական թերթի վրա գրված է. «Առաջարկում եմ Ֆէօդոր Ֆէօդորովիչ Տիմօշկինին Պետական Դումայի համար իբրև ծառայ»։

—

Բագում ընդհանուր կուրիայի կողմից Պետական Դումայի պատուիրակներ ընտրվեցին ձայների առաւելութեամբ առաջին երկու հոգի՝ երդ.-հաւ. Պապաջանեան և Մ. Ասատուրով։ Մնացած վեց պատուիրակի ընտրութիւնը կայանալու է լրացուցիչ կերպով մինչև հոկտ. 20-ը, երբ և տեղի կունենայ պատգամաւորի ընտրութիւնը։

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ ԳԱԼՖՅԱՑԵԱՆԻ ՕԳՏԻՆ

—

Դեռ այս տարվայ սկզբին մենք առաջինը կոչ արինք հայ հասարակութեան օգնել իր հիւանդ արտիստ Գալֆյեանին։ Կոչը գտաւ արձագանք և հիւանդ արտիստը կարող եղաւ ժողովված հաւաստ դումարով մեկնել Թիֆլիսից իր առողջութիւնը վերականգնելու համար։

Այժմ նա դարձեալ Թիֆլիսումն է. բայց հիւանդութիւնը, որ արմատացել է նրա մէջ անպատաս ապրուստի շնորհիւ, կարօտ է հերթական բժշկութեան։

Բացի հայ մամուլից ներկայումս ռուս մամուլը ևս մի շարք յօդուած-ներ տպեց Գալֆյեանի դրութեան մասին և հանգանակութիւն բացեց նրա օգտին։ Մինչդեռ մամուլն ընդհանրապէս գտատպարտեց հայ դրամատիկ ընկերութեան վարչութեան դիտաւորեալ լռութիւն պահպանելը և ոչնչով իր հիւանդ գործչին չօգնելը։

Սակայն հիւանդ արտիստի ընկերներից Ամ.-Խարազեանը՝ առաջինը դրդված իր ընկերական բարոյական պարտականութեան զգացմունքից, այսօր վրա ազնուականութեան թատրոնում կազմակերպում է մի ներկայացում ի նպաստ Գալֆյեանի։

Ողջունելով ընկերական այդ քայլը, մենք մեր կողմից վերջին անգամ յորդորում ենք բոլոր նրանց, ում սրտին թանդ է հայ հիւանդ արտիստին նպաստելու պատրաստակամութիւնը և ազգային արժանապատուութիւնը օտարների կշտամբանքների դիմաց, գնալ այսօր թատրոն և աջակցել ներկայացման արդիւնքի կատարեալ աջողութեան։ Մանաւանդ որ ինքը Գալֆյեան հանդէս է գալու Համլետի մենախօսութեան մէջ։

Ե.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Հայկական կեանքը Թեմիր-Խան-Շուրայում

Թեմիր-Խան-Շուրա, 6 հոկտեմբերի

Քաղաքս չունենալով երկաթուղային հաղորդակցութիւն՝ գտնվում է մի տեսակ մեկուսացած դրութեան մէջ։

Եւ հէնց այդ մեկուսացած դրութիւնն է պատճառը, աշխարհագրական դիրքի այդ անպատաս պայմաններն են գլխաւոր արգելակիչը հանդիսանում՝ քաղաքի բարգաւաճման, նրա տնտեսական առաջխաղացման գործին, և մի ժամանակվայ—ինչպէս ընիկ տեղացիներն են պատմում—ճոխ և հարուստ քաղաքը, ուր առևտուրը առաջին տեղն էր բռնում և դրա հետ միասին հասարակական եռուն ու զուարթ կեանք ունէր, այսօր բոլորովին փոխվել է և ստացել մի մեռած քաղաքի կերպարանք, առևտրականները փոխադրվել են ուրիշ աւելի հարուստ և կեանքի պայմանների կողմից բարենպաստ քաղաքներ, թողնելով իրանց եռեռ այնպիսիներին, որոնք կարողութիւն չունեն տեղից շարժվելու. առևտրականների պէս և՛ արհեստաւորները և առհասարակ բոլոր դասակարգերի պատկանող մարդիկ։

Սակայն տեղական հայկական փոքրիկ գաղութի կեանքի կենդանութիւնը, մանաւանդ Հիւսիսային Կովկասում՝ Դաղստանի այս խուլ կողմերում, մի եզակի երևոյթ է։

Մի խումբ երիտասարդներ, որոնց հետ միասին և տեղիս ծխ. քահանան, նախաձեռել են ներկայ ուսումնարանական շէնքը աւելի ընդարձակել և այդտեղ մի մնայուն բեմ կառուցանել, որտեղ պարբերաբար տրվելիք ներկայացումների և երեկոյթների արդիւնքից օգտվելու է ծխ. ուսումնարանը, որտեղ սովորում են գլխաւորապէս չքաւորների ուսումնատենչ երեխաները։ Այդ առիթով նախաձեռնող պարոնները արդէն հանգանակութիւն են բացել։

Aslan-Balasi

Նորութիւններ Սղնախից

—

Սղնախ, 9 հոկտեմբերի

Սղնախի վրաց ինտելիգենցիան հիմնում է Սղնախում Վրաց մէջ Գրագիտութիւն տարածող Ընկերութեան ճիւղ։ Թոյլտուութիւնը ստացված է։ Պէտք է ընտրվեն վարչութեան անդամներ։

Սղնախի գաւառը տալիս է 5 պատուիրակ Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու։ Պատուիրակներից մէկին ընտրում է քաղաքը, երկուսին՝ գիւղացիները և երկուսին մանը և խոշոր կալուածատէրերը։ Այդ 5 պատուիրակները կը գնան Թիֆլիս պատգամաւորի ընտրութիւններին մասնակցելու։ Գիւղական ընտրութիւնները վերջացան սեպտ. վերջերին. քաղաքում ընտրութիւնները կայացան հոկտեմբերի 3-ին։

Անցեալները մի խմբակ գնում է որսի Օրաղեսի կողմերը Վերին Մաշխանայի գիւղից։ Հեռանալով գիւղից՝ խմբից մի քանի հոգի առաջ են ընկնում, յետ մնացածները «լինչկով» հետևում են նրանց։ Կառքի մէջ ուղևորում են բաւական պաշար քէֆ անելու համար և մի քթոց խաղող։ Այստեղ լինում է մի ծերունի մարդ՝ մօտ 70 տարեկան։ Սա ասում է ընկերոջ. «Երբ որ նրանք հեռանան, արի այս խաղողը մենք ուտենք»։ Այս ասելով՝ ծերուկը կռանում է և քթոցից խաղող է հանում, բայց այս ժամանակ նրա ձեռքում բռնած հրացանը պայթում է և դիպչում է կողքին ու խոյսոյն մեռնում։ Ուրախութիւնը փոխվում է սուգի։ Հանգուցեալը թողնում է երեք դուստր, որոնցից երկուսը օրիորդ են։

Կախէթիայի երկաթուղու գլխաւոր կայարանը լինելու է Գուրջանի գիւղը։ Այստեղից գիծը ճիւղաւորվում է երկուսի. մէկ գիծը գնում է Թէլաւ, միւսը Սղնախ։ Գիւղում բացված է պոստ-հեռագրատուն։ Այս գիւղի մօտ կայ մի լճակ «Ախտալա» անունով։ Լճակը հանքային է, նման մոխրաջրին։ Ամառն այստեղ գալիս են հիւանդներ լողանալու։ Շուրջը բաց է։ Երկաթուղի անցնելուց յետոյ՝ Ախտալայի նշանակութիւնը կը բարձրանայ։ Ժողովրդական աւանդութիւնը պատմում է, որ այդ տեղում սկզբում եղել է կալ։ Քահանան կիրակի օրը կալում կալում է եղել ցորեն։ Այդ ժամանակ անցնում է այդ տեղով Քրիստոսը և տեսնելով այս՝ անիծում է քահանային։ Կալը դառնում է հանքային ջուր։

Գաւառում այգեկութը վերջանում է։ Գինին այս տարի համեմատած նախկին տարիների հետ՝ քիչ կը լինի, բայց յատկութեամբ լաւ։

Ն. Ն.

—

Սիրոյ զոհեր

Զաքաթալա, 9 հոկտեմբերի

Քաղաքիս մի վերստ հեռաւորութեան վրա գտնվող ճար լէզգիական գիւղացի երկու երիտասարդ սիրահարվում են մի աղջկայ վրա, որոնցից ոչ մէկը չէ կամենում զիջել իր «սիրոյ հատորիկը» միւսին։ Երկար տատանումից յետոյ՝ մէկը միւսին ոչնչացնելու և իր «նպատակին» հասնելու համար դաշոյնի վէրք է հասցնում միւսին, որը երկար ժամանակ հիւանդանոցում պառկելուց յետոյ վերջապէս առողջանում է, բայց աչ թեը չորանում է...

Երէկ, կէսօրին, տեղիս բազարում իրար հանդիպում են կրկին. առաջինը՝ կամենալով իր «թշնամուն» խլաց ոչնչացնել՝ կրկին դաշոյնի մի հարուած է հասցնում նրա մէջքին. վերջինը ձախ ձեռքով գրպանից հանում է ատրճանակը և նոյն ձեռքով տեղն ու տեղը սպանում իր ախոյեանին։

Նման դէպքեր տարին տասներկու ամիս տեղի են ունենում մեր շրջանում և այն՝ ռոմանտիկական հողի վրա։ Այնուհետև կոտորած է սկսվում մօտիկ հարազատների, բարեկամների, հոյնիկ հեռաւոր բարեկամների միջև... տարիներ շարունակ։

Սօյզդէ

—

Պատժիչ ձեռ

Հադրութ, 7 հոկտեմբերի

Դեռ անցեալ ուսումն. տարվայ սկզբին էր, երբ մենք նկատեցինք, որ տեղիս պետ. դպրոցի ուսուցչուհիներից մէկը դասից յետոյ միշտ մի քանի աշակերտների հետ է տուն վերադառնում։ Ուսուցչուհու տուն հասնելուց՝ աշակերտները մնում են պատշգամբում շարված, իսկ ուսուցչուհին ճաշի է նստում։ Մեզ շատ անգամ պատահել է տեսնել աշակերտներին ձմեռվայ ցուրտ ժամանակին կանգնած պատշգամբում դողդողալիս։ Այդպէս է պատժում ուսուցչուհին անբաւարար առաջադիմութիւն ցոյց տուող աշակերտներին։

Բայց այդ չէ բոլորը։ Պէտք է ասել, որ Հադրութի պետ. դպրոցը գտնվում է գիւղի մի ծայրում, իսկ ուսուցչուհու տունը՝ միւս։ Ուսուցչուհու ետևից գիւղով անցնելիս աշակերտներին ճանաչում են սրանց բարեկամները, ծանօթները, որոնք շատ ուշ են այդ մասին խմաց տալ ծնողներին, որ իրանց երեխան առանց ճաշի է մնացել։ Սոված, պատժված ու մրսած երեխաները տուն են վերադառնում, իսկ այստեղ էլ ծնողներն են պատժում։

Դժբաղդաբար այս տարի էլ այդ ուսուցչուհին աշակերտներին փողոցով տանում է իր տան պատշգամբում (բացօդեայ) շարում։ Մենք կարծում ենք, որ այդ ձևի պատժելը հակամանկավարժական է, ուստի վերև յիշածի մասին պետ. դպրոցի աւագ ուսուցչի ուշադրութիւնն ենք հրաւիրում։

Մի երկու շաբաթից յետոյ Հադրութում կատարեալ ձմեռ է լինելու, մինչ կրկին պիտի 8—11 տարեկան երեխաները ուսուցչուհու պատշգամբում դողդողան...

Հայկանուշ

—

Դպրոցի բօնամի

Վարդաշէն, 11 հոկտեմբերի

Ամսիս 6-ին տեղիս հայոց ծխ. դպրոցում հետևեալ դէպքն է տեղի ունենում։ Դասի ժամանակ, երբ բակում ոչ ոք չէ լինում, չարամտի մէկը մտնում է բաց ուսուցչանոցը և փոխանակ սեղանի վրա դրված 40 ռուբլին վեցնելու կամ երկու հարիւրից աւելի արժողութեամբ գրադարանից որևէ գիրք, քարտէզ, պատկեր վերցնելու, գողանում է մի ցուցակ, որի մէջ այս տարի աւանդված դասերն էին գրվում, որը ոչ մի տեղ և ոչ մէկին պէտք չէր ամբողջ Վարդաշէնում...

Թէ ինչ նպատակով է գողացված, անհասկանալի է։ Եթէ այդ գողը սովորական գիւղացի կամ դպրոցական աշակերտ լինէր, անպայման աւելի արժէքաւոր և իրան անհրաժեշտ իր կը վերցնէր։

Բանիմաց մարդիկ այդ վարմունքը վերագրում են չարամիտ, անազնիւ, բայց խելացի մարդու, որ դպրոցին անհրաժեշտ ցուցակն անհետացնելով՝ կամենում է խանգարել կանոնաւոր ընթացող դպրոցական գործը և վարկաբեկել դասատու ուսուցիչներին։

Կ. Ցարութիւնեան

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—

Բագու, 9 հոկտեմբերի

Բագում ահա հինգ տարի է գոյութիւն ունի Բ. Հ. Կ. Միութիւնը, որը, շնորհիւ իր մի քանի անդամների եռանդուն ջանքերի, բաւական աչքի ընկնող դեր է կատարում տեղիս հայկական շրջանում։

Միութիւնը, բացի զանազան սեկցիաներից, ունի նաև դպրոցական-արհեստագիտական սեկցիա, ուր սովորողների ծնողներին հոկտ. 9-ին ժողովի էին հրաւիրել։

Միութեան գրասենեակում ժողովվել էին մօտ 60 երկսեռ ծնողներ, որոնք տխուր, տրտում և ախ ու վիշով նստած էին։

Ծնողների մէջ 95%-ը հացթուխ, լուացարար, Բ. Հ. Մարդ. Ընկերութիւնից նըպաստ ստացող այրի կանայք և բանւոր, հասարակ արհեստաւոր մարդիկ էին։

Այդ դասակարգն է շրջապատել Կուլտ. Միութեան ուսումն.-արհեստանոց ճիւղը, ուր սովորող աշակերտուհիների թիւը ուղիղ 108 հոգի են։

Ժողովի նպատակը հետևեալն էր։

Վերջին ժամանակներս աշակերտուհիների մէջ գողութեան դէպքեր են տեղի ունեցել։

Ժողովը, ցերեկվայ ժամը 4-ին, Միութեան եռանդուն անդամուհի տիկ. Ս. Մ. Աղամեանը բացեց երկար խրատական ճառով, ուղղված՝ ծնողներին։ Նա յայտնեց, որ աշակերտուհիների շրջանում գողացվել են մատանի, աշակերտուհիներից մէկի նախաճաշը, մի քանի կոպէկները և վերջապէս վերջին օրերս մի աշակերտուհու վերնազգեստը (ժակետ)։

Տիկնոջ ճառից իմացանք, որ 108 աշակերտուհուց միայն 35-ն է 30-ական ր. թոշակ վճարում, իսկ մնացեալ 73 աշակերտուհիների մեծամասնութիւնը ձրի սովորելուց զատ՝ փոքրամասնութիւնը դեռ վարձ էլ և ստանում Միութիւնից։ Գանգատվեց, որ վճարող 35 աշակերտուհիներից դժուարութեամբ է ստացվում թոշակը։

Ապա ծնողներին առաջարկվեց միջոցների մասին առաջարկութիւններ անել գողութիւններին վերջ դնելու համար։ Ծնողներից շատերը զանազան միջոցներ առաջարկեցին և եկան այն եզրակացութեան, որ ծնողներից մի յանձնաժողով ընտրվի մասնաւոր ժողովներում խորհրդակցելու ու գողութիւնների իսկական պատճառը ուսումնասիրելու։

Ծնողներից և դրսից ընտրվեցին տ. տ. Բունիաթեան, Գրիգորեան, Սարգսեան, Խաչատրեան և պ. պ. Ս. Գարագաշ, Ա. Սաֆարեան և Սարգսեան։ Թէ որքան կաջողվի ընտրված տիկիններին և պարոններին արմատախիլ անել գողոցից այդ ախտը իրանց խրատներով, այդ ցոյց կը տայ ապագան, բայց ցաւալի է, որ մի հիմնարկութեան կրթական մատաղ սերունդի տաճարում ծնողական ժողովները այդպիսի անպատուաբեր երևոյթների համար են գումարվում։

Պէտք է խոստովանել, որ ինչպէս տ. Ս. Աղամեանը, նոյնպէս և օր. Օ. Ն. Սոֆարեանը ոչ մի ջանք չեն խնայում զոր դնել դպրոցի առաջադիմութեան և բարեկարգման։

Ժողովը փակվեց երեկոյեան ժամը 8-ին։

Ս. Գարագաշ

ԳՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻՄ

—

Շուշի, 8 հոկտեմբերի

1905—1906 թ. հայ թուրքական ընդհարումներից յետոյ դադարել էին գողութիւնները։ Երբեմն-երբեմն մանակի գողացվում էր եզ, կով և ձի, սակայն ոստիկանութեան գործադրած խստագոյն միջոցները վանեցին դրեցին և դրան։ Վեց տարի է, ինչ Ղարաբաղում, ընդհանրապէս կարելի է ասել, գողութիւններ չը կան։ Ժողովուրդը այդ կողմից ապահով՝ իր անասունները և լծկանները ազատ բաց էր թողնում՝ արածելու և դրա մասին առանձին հոգս ու հոգացողութիւն չունէր։

Գիւղացու համար ի հարկէ ծանր պատուհաս է, երբ դաշտային ծանր աշխատանքից վերադարձած՝ իր մարմին հանգստութիւն է տալիս, գողը գալիս է և նրա բագից կամ գոմից քշում տանում է նրա ընկեր լծկաններին, կամ կովը, կամ ձին և ոչխարը։ Սա անարգ մէջոց է, ցաւ ու վիշտ պատճառող գործ, բայց ինչ անես, որ մարդիկ կան, որոնք այդ պրոֆեսսիայից դուրս, աշխարհումս, ուրիշ աշխատելու միջոց չը գիտեն։ Իսկ գիւղացու գողացված անասունները կամ լծկանները նորից փոխարինելու անգամին դժուարութիւններ կան։

Ցանկալի էր, որ գողութիւնը իսպառ արմատախիլ լինէր ժողովրդի մէջից, բայց այդ չէ լինում, նախ որ ժողովուրդը խստապատիժ է, գողութեան ճնշասակարութիւնը չի նայում, այլ նրա շահաւէտութիւնը, երկրորդ՝ գողութեան մասին գործադրված միջոցները խպառ թոյլ և հնացած բաներ են, ժողովրդի վարքի ու բարքի և բընաւորութեան անհամապատասխան կազմված։

Նախկին տարիներում, գաւառապետ Գանչիլի կառավարութեան օրերով, Ղարաբաղը չքնաղ Եւրոպա էր դարձել։ Գողութիւնը երազ էր ժողովրդի համար, որովհետև հրամայված էր՝ գողացված անասունի հետքը որտեղ որ կանգ առաւ, այնտեղի ամբողջ հասարակութիւնը, անխտիր, առանց բացառութեան, պիտի վճարէ նրա կրկնակի գինը և դիւանական ծախս։ Եւ ոչ ոք երկիւղից չէր համարձակվում գողութիւն անելու։ Վերացրին այդ կարգը, մոցրին օրէնքը, իսկ օրէնքը պահանջում է, որ վկաներ կանգնեցնեն գողի երեսին, որից յետոյ կորուստը առնեն և տիրոջը տան։ Իսկ վկաներ գողութեան համար դժուար են գտնվում, ոչ ոք երկիւղից վկայ չի կանգնում։

Ներկայումս գողութիւնը սկիզբ է առել շատ զօրեղ թափով։ Մութը վրա հասաւ թէ չէ, ամեն կողմից վազնասուն է բարձրանում. մէկը բողոքում է՝ այծերս տարան, միւսը եզները, երրորդը կովերը և այլն։ Անցած երեկոյեան Խանծախի ձորակում կողոպտեցին մի բալուշեցի հայի և սրա կնոջը և ծանը վիրաւորեցին կնոջը։ Կասկածով ձերբակալված են մի քանի թուրքեր։ Գողութիւններ կատարվել են Ղայբալի, Կարկաժան, Ջամիլլու և Խանծախ գիւղերում։ Գողութեան այսպիսի անակնկալ կերպով սուր կերպարանք առնելը ժողովրդի մէջ մեկնվում է զանազան կերպով։

Պետ

ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Նոր-Բայազէտ, 3 հոկտեմբերի

Տեղիս վաճառականների շրջանում մտք է յղացել հիմնել փոխադարձ վարկի ընկերութիւն մեր քաղաքում, որի կարեւորութիւնը վաղուց է զգացվում մեր վաճառականների համար, որոնցից շատերը ի հարկէ օգտվում են Երևանի, Թիֆլիսի և այլ տեղերի բանկերից։

Անցեալ կիրակի արդէն երրորդ ժողովն էր, որ կայացաւ այդ առիթով, ուր ընկերութեան փայերը (բաժնեգին) հասան մօտ 30-ի։ Բաժնեգին էր որոշված 200 ր. իւրաքանչիւրը, որի 10%-ը խպոյն վերցվեց և պահ տրվեց տեղիս դրամատէր Հ. Խաչատրեանին, պատուիրելով որ այդ գումարը, մինչև ընկերութեան կանոնադրութեան հաստատումը, ի պահեստ տայ մի որևէ դրամանոցում։ Բաժնեվճարի մնացեալ գումարը վճարվելու է ընկերութեան հաստատութեան միջոցին։

Նայած ժողովի տրամադրութեան և տեղի դրամական կարիքներին, սպասվում է մօտ 50 բաժնետէրեր 10,000 ր. դրամագլխով, որի հիման վրա միայն ընկերութեան կանոնադրութիւնը *) կարժանանայ հաստատութեան ֆինանսական մինիստրութեան կողմից, որին այս օրերս դիմելու են փոխադարձ վարկի ընկերութեան հիմնադիր անդամները, որոնց մէջ ակտիվ գործունէութիւն է ցոյց տալիս Հ. Խաչատրեան։

Ընկերութեան հիմնադիրները ի նկատի ունեն իրանց անդամների թիւը աւելացնել գաւառի վաճառականներով, որոնք գտնվում են կենտրոնական գիւղերում, այն է՝ Ելենովկայում, Ներքին-Ախտայում, Բասարգէչարում և այլն, որոնք դեռ ևս տեղեկութիւն չունեն այդ մասին։

Այդ ընկերութեան նախաձեռնողն է, ինչպէս երևում է, Հ. Խաչատրեան, որը ամեն ջանք է գործ դնում այդ բանը գլուխ բերելու, ուստի ցանկալի է, որ հիմնադիր անդամները արագ կպած լինէին գործին, քանի որ մեր քաղաքում դա միայն երկրորդ կուլտուրական ընկերութիւնն է՝ փոխառու խնայողական ընկերութեան կողքին, որը, սակայն, իր տեղն ունի, այն ինչ փոխադարձ վարկայինը իր տեղը, որ կարող է մեծ գարկ տալ մեր վաճառականական և առևտրաարդիւնաբերական ձեռնարկութիւններին։

Անկասկած շնորհաւորել պէտք է այդ նոր ձեռնարկութիւնը մեր քաղաքի վաճառականների կողմից, որոնք դժբաղդաբար շատ յետ են մնացել առևտրա-արդիւնաբերութեան առաջադիմութիւնից ամեն քայլափոխում։ Եւ մենք լիայոյս ենք, որ բոլոր անդամագրվողները բարեյոյս կերպով կը վերաբերվեն այդ հիմնարկութեան, որի տուած օգուտները ոչ ոք չէ կարող ժխտել։

Գ. Սինանեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Գանձակի կալուածատէր Մելիք-Շահնազարեանի կինը՝ Հեղինէ Վարդանեանը, որ օրինաւոր կերպով բաժանված էր իր ամուսնուց, գանգատ է ներկայացնում նահանգական դատարանին և մեղադրում իր ամուսնալուծական գործում վկաներ հանդիսացած Քոչարեանին ու Օհանեանին՝ իբրև սուտ տեղից վկայութիւն տուողներին, իսկ իր նախկին ամուսին Մելիք Շահնազարեանին՝ իբրև այդ բանում դրդապատճառ։

*) Իբրև ձեռնարկ վերցված է առնված Երևանի փոխադարձ վարկի ընկերութեան կանոնադրութիւնը, որ հաստատված է 1901 թվին։

Գ. Ս.

Նահանգական դատարանը մեղաւոր ճանաչելով երեքին էլ յիշեալ մեղադրական գործում, դատապարտում է Մելիք-Շահնազարեանին 3½, իսկ Քոչարեանին և Օհանեանին 3 տարվայ կալանաւորութեան բանտում, զրկելով բոլոր իրաւունքներից։

Մեղադրվողները գործը փոխադրում են Թիֆլիսի դատաստանական պալատը, որը հոկտեմբերի 8-ին մանրամասն քննութեան առնելով՝ հաստատում է Գանձակի նահանգական դատարանի վճիռը։

Մելիք-Շահնազարեանը, որ մինչև այդ ազատ էր գրաւականով և միևնոյն ժամանակ երկրորդ անգամ ամուսնացել էր Մարիամ Գ. Բէհրութեանի հետ, դատաստանական պալատի որոշմամբ կալանաւորվեց և ուղարկվեց Մետեխի բանտը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Կովկասի փոխարքան Սալալայից ընացաւ հետևեալ Բարձրագոյն հեռագիրը։ Ցանկնարարում եմ ձեզ, կոմս, հաղորդել Թիֆլիսի ըէալական դպրոցի շինումեան օծմանը ներկայ եղողներին իմ շնորհակալութիւնը աղօթքների եւ արտայայտած հաւատարմութեան զգացմունքների համար։ Ցանկանում եմ բարգաւաճումն նոր կրթական հաստատութեանը յօգուտ երկրի։ ՆԻԿՕԼԱՔ

Այս ամենաողջամտ հեռագիրը ստացվեց իբրև պատասխան այն հեռագրի, որ փոխարքան Թիֆլիսից ուղարկեց Թիֆլիսի ըէալական դպրոցի շինութեան օծման առիթով։

✦ Էջմիածնից վերադարձան համազգային տօնի առիթով Թիֆլիսից մեկնած պատգամաւորները։

✦ Վերադարձաւ Թիֆլիսի նահանգապետ Զերնեավսկին։

✦ Վաղվանից «Կրուժօկի» շինութեան մէջ (ամարային) կը բացվի կովկասեան թռչնաբուծական ընկերութեան VII հերթական թռչնապահութեան ցուցանդէսը, որ հետաքրքրական է լինելու ի մէջի այլոց այն տեսակէտից, որ ցոյց են տրվելու թռչուններին կերակրելու նոր միջոցներ և արհեստականապէս ձուից ձագեր առաջ բերելու փորձեր։

✦ Թիֆլիսի պատաստանական պալատը այս օրերս արդարացրեց «Баку» և «Кассіа» թերթերի խմբագիրներ Խր. Վէրմիշեանին և Ա. Վէյբէրգին, որոնց դէմ դատ էր սկսել Աղա-Բալա Ղուլիեվը՝ մեղադրելով երկուսին զրպարտութիւն տպելու մէջ։

✦ Հայոց Դրամատ. Ընկերութեան դերասանուհի օր. Ժասմին այս ամսի սկզբներին ճանապարհվել է Մոսկվա՝ մանելու դրամատիկական կուրսերը։

✦ Թիֆլիս է եկել դատական մի գործի առիթով «Баку»-ի խմբագիր Խր. Վէրմիշեան։

✦ Այս շաբաթ օրը, հոկտ. 20-ին, Թիֆլիսի հասարակական ակումբում Տ. Մարգարեանը կը կարդայ ըեֆերատ «Հոգեբանութեան և մանկավարժական հիմունքները» (Վիլիամ Վունդի ծննդեան 80-ամեակի առիթով)։

✦ Բագուի նաւթարդիւնաբերողների 31-րդ հերթական համագումարը կայանալու է այս տարվայ նոյեմբերի 30-ին։

✦ «Баку» թերթը իր հոկտ. 13-ի համարում զետեղել է ս. Սահակ և ս. Մեսրոպ թարգմանիչների պատկերները, նուիրելով տարերի գիւտի յօբելեանին առանձին յօդուածներ։

✦ Ներկայումս Պետերբուրգի շրջանի կարևորագոյն գործերի քննիչ Ալէքսանդրովը Լրժինի գործի առիթով հարցաքննում է մի քանի մարդկանց Գանձակ քաղաքում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

—

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Օպէրա

Հոկտեմբերի 11-ին Թիֆլիսում առաջին անգամ օպէրային խումբը ներկայացրեց Զայկովսկիի «Օրլէանի կոյսը» օպէրան, որի նիւթը Շիլլերի պատմական ողբերգութիւնն է։ Նոյն օպէրան կրկնվեց շաբաթ, հոկտեմբերի 13-ին, թատրոնը ծայրէ ի ծայր լի հասարակութեան ներկայութեամբ։

Տաղանդաւոր ռուս երաժշտագէտը երաժշտական մասը համակերպել է պէէսի բովանդակութեանը, ենթարկվելով արտաահմանեան երաժշտագէտների ազդեցութեանը։ Եւ տեղ-տեղ «Օրլէանի կոյսը» օպէրայի մէջ կան հարուստ մելոդիաներ Մեյէրբեռեան ստիլով։ Ընդհանրապէս իբրև լուրջ երաժշտական գրուածք, «Օրլէանի կոյսը» օպէրան իր պատուաւոր տեղն ունի գրաւած երաժշտական բեպերտուարում։

Խաղի ամբողջ ծանրութիւնը ընկած է համանուն հերոսուհու վրա, որ ներկայ օպէրային անդամներից բացառապէս Ալէշկոլին է պատկանում։ Սկզբից մինչև վերջ նա այն ուժեղ զսպանակն է, որի շուրջ պտտվում են մնացած գործող անձինք։ Հոգեկան մի շարք յոյզերի ու կռիւների մի բովանդակ աշխարհ է Օրլէանի կոյսի կեանքը այն մի քանի ժամերում, ուր նա սակայն իր բնական ձիրքի շնորհիւ միանգամայն տիպիկ, կենդանի և ազդու հանդէս եկաւ։ Ալէշկոլն, չը սպառելով իր ձայնի ուժգնութիւնը և տ[illegible]

բոքված խաղի մէջ։ Ու յիրաւի բուռն ծափահարութիւնը հետեւեց նրա թողած տպաւորութեանը։

Մնացած դերակատարները — Կայդանով, Լիւբչենկո, Մօզուլեվսկի, Եարօսլավսկի — իրենց փորձված և իւրաքանչիւրը իր տեղում շնորհալի երգիչներ աջող անսամբլին նըպաստեցին օրկէստրի հետ միասին, որ այդ օրը ղեկավարում էր հին, փորձված դիրիժեօր Զելենին։

Կիրակի, հոկտ. 14-ին, ցերեկով տրվեց «Սէվիլեան սափրիչ» կոմիքական օպէրան, որի մէջ ըստ սովորականի մեծ զուարճութիւն պատճառեցին իրանց աշխոյժ խաղով տ. Սաբանէեվա, կոմիկ Դեմեանէնկո, Դէրժավին, Եարօսլավսկի։ Սարաջեվը կոմս Ալմավիվայի դերում մեզ չը գոհացրեց։ Նրա շարժումները բռնաբռօսիկ են և զուրկ հարկաւոր կենդանութիւնից։

Պէտք է շնորհակալ լինել Պալիեվից այդ ցերեկվայ ներկայացումների համար, երբ թատրոնը լիքն է լինում սովորաբար փոքրիկ «երաժշտասէրներով», որոնք ստանում են էստետիկական մեծ բաւականութիւն։

Երեկոյեան կրկնվեց «Կարմէն» օպէրան։

Այսօր առաջին անգամ այս սեզոնում կը տրվի Պուչինիի յայտնի «M-me Բատերֆլէյ» օպէրան, որի յուզիչ ապաւորութիւնը դեռ թարմ պիտի լինի Արքունական թատրոնը յաճախող հասարակութեան յիշողութեան մէջ։ Ե.

ՈՐԲԱԽՆԱՄԻՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Ուստր, 4 հոկտ. (Ն. տ.)

Սեպտեմբերի վերջին կիրակին արդէն թանր-հեռացեր է մեզնէ, բայց նոյն իրիկուան նուագահանդէսին թողած անուշ տպաւորութիւնը տակաւին թարմ է մեր պարտասած մտքերուն ու անձկայրեաց հոգիներուն վրայ։ Ու ասիկա այն յայտնի պատճառաւ, որ՝ Ուստրի Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան սոյն նուագահանդէսը՝ սովորական միօրինակ հանդէսներէն բոլորովին տարբեր եղանակաւ, տարբեր ձեով կազմուած էր։

Նուագահանդէս առաջին անգամ չէր, որ կը տրուէր այս գաղութին մէջ, բայց առաջին անգամն էր, որ այսպիսի հանդէսի մը prima-dona-ն (աստղը) հայ արտիստ մը կը հանդիսանար, որուն անունը՝ նուագահանդէսին կազմակերպիչ ազնուափայլ տիկնանց անդուլ ջանքերուն հետ միացած՝ 700-ի մօտ ունկնդիրներու բազմութիւն մը կրցած էր հաւաքել Հօրտիկլուչբրլ մեծ ու լուսաշող սրահին մէջ, հակառակ օրուան տեղատարափ անձրևին։

Այդ աստղը օր. Էլենա Ա. Զօփուբեանն էր, ամերիկեան երկինքին վրայ տարբերի վեր փայլփլող, բայց հայ երկինքին վրայ դեռ վերջերս նշուլող յայտնի արտիստը, որուն կարողութեան անծանօթ մնացեր էին ինծի հետ շատեր ևս, երաժշտութեան երկրպագուներ։ Այդ իրիկուն, սակայն, մենք առիթ ունեցանք լսելու օր. Զօփուբեանի մենակները, այնքան ազդող ու տպաւորիչ, և համոզուեցանք, թէ ամերիկեան շրջանակներու մէջ իր վայելած համբաւին իսկական տէրն է, ու կարդ մը գեղարուեստական թերթերու նուիրած գովեստներուն իրապէս արժանի արտիստ։

Լսեցինք օր. Զօփուբեանը Chaminade-ի «L'Eté»-ին մէջ, Gounod-ի Serenades-ին և ուրիշ կտորներու մէջ, որոնցմով կրցաւ ունկնդիրը բազմութեան վրայ անջրելի տպաւորութիւն թողուլ և իրեն գերել նոյն իսկ երգին ու երաժշտութեան ոյժին անգիտակ խոպան հոգիները։ Վերոյիշեալ կտորներէն զատ երգեց հայկական «Օրօրը», որ իր ազգային դրոշմովը ունկնդիրներուն վրայ ալ աւելի խոր տպաւորութիւն ձգեց և բուռն ծափերու արժանացաւ։

Նուագահանդէսին կը մասնակցէր նաև պ. Ռուբէն Էքսէրճեան, ծանօթ հայ ջութակահարը, որ նուագեց օպէրաներու քանի մը խրթին կտորներ ու «Մայր Արաքսին» մեծ յաջողութեամբ։

Նուագահանդէսին երկրորդ մասը կազմեց շահեկան բանախօսութիւն մը՝ գեր. տէր-Մուշեղ արքեպիսկոպոսէն, «Երաժշտութիւն» նիւթին վրայ, որ լարուած ուշադրութեամբ մը մտիկ ըրին ներկաները ցվերջ, որուն անգլերէն թարգմանութիւնը կարդացուեցաւ օր. Է. Թոփհանէլեանէ, ամերիկեան ունկնդիրներու համար, որոնց մէջ աչքի կը զարնուէին քաղաքիս ոստիկանապետն ու գործարանատէրեր։

Նուագահանդէսը վերջացաւ շատ յաջող և արդիւնաւոր։

Շնորհաւորելի է Որբախնամ Ընկերութիւնը՝ հանրային նպատակներու ի նպաստ տրուելիք հանդէսներու սէզօնը նուագահանդէսով բանալու ազնիւ գաղափարը յղանալուն համար, որ հայ տաղանդը ծանօթացնելու զերազանց նպատակն ունէր միանգամայն։

Երախտագիտութեան արժանի են հանդէսին կազմակերպիչները, ի մասնաւորի տիկնայք Ն. Գ. Մարգարեան, Զ. Ս. Ռատիկեան, Բ. Կ. Թովմաճանեան, Ա. Էքմէքճեան և օր. Է. Թոփհանէլեան, որոնք նուագահանդէսին փայլուն յաջողութեան տիրականօրէն աշխատեցան՝ նիւթական շահէն աւելի անոր բարոյական շահն ապահովելու համար։

Ու բարոյական այդ շահը կրցան ձեռք բերել։։։

Ցաղթանակն իրենցն է։։։

Մաղաք Գ. Պէրպէրեան

Ց. Գ.—Պատճառ առիթէն օգտուելով ինտերվիու մը ունեցայ օր. Զօփուբեանի հետ, որպէս «Մշակի» թղթակից։ Այս մասին ուրիշ անգամ։ *Նոյն*

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, 5 հոկտեմբերի

Հրապարակով մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում Սիմէօն և Շահան Նում Մալեան ամուսիններին, որոնք իրանց բարի ցանկութեամբ ասպարէզ եկան և տեղիս ս. Լուսաւորիչ դպրոցի բաժանմունքներին կից բաց արին Ե. և Զ. բաժանմունքներ, յատկացնելով այդ նպատակի համար որպէս մշտական նպաստ տարեկան 300 ր.։ Ցարգելի Մալեան ամուսինները իրանց այդ օրինակելի գործով նախ՝ ազատեցին մի շարք երեխաների անպատակ թափառելուց և երկրորդ՝ հնարաւորութիւն տուին իրագործելու 3-դասեան դպրոցի գաղափարը համաձայն ներկայ ուսումնական ծրագրի, որ քիչ դպրոցներում միայն իրագործված է։ Հոգաբարձութիւնս գիտակցելով Մալեան ամուսինների գործի մեծութիւնը, որոշեց նաև յիշեալ դասարանները բանալ բարերարների անունով։

Անդամք հոգաբարձութեան՝

Լ. Տէր Յովսէփեան, Յով. Մալեանց

Ա. Տէր-Յարութիւնեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Ադրիանուպոլսի մօտ սկսվել է վճռական ճակատամարտ բուլգար և Թիւրք զօրքերի միջև։ Սերբիական զօրքերը աճապարում են միանալ բուլգարներին. բոլոր գլխաւոր բերդերը Ադրիանուպոլսի շուրջը ընկել է դաշնակիցների ձեռքը։ Երկու կողմից ըսպանվածների և վիրաւորների թիւը հազարների է հասնում։

✦ Վիէննայից և Բերլինից հեռագրում են, թէ իբր բուլգարները Քըրկ-Քիլիսէի մօտ կռիւի մէջ կորցրել են 3000 մարդ և լիակատար պարտութիւն կրել։ Բուլգարական գործակալութիւնը հերքում է յիշեալ տեղեկութիւնը։

✦ Ամբողջ Ցունաստանում յայտարարվեց պաշարողական դրութիւն։

✦ Վիէննայից հեռագրում են, որ պատերազմում վիրաւորվել է Էլասօնի մօտերը յունաց գահաժառանգը։

✦ Բէլգրադից հեռագրում են, որ սերբերը սպանել են ոչ միայն թիւրքերի կողմը անցնելու փորձ անող յայտնի Խասա Բօլշինացին, այլ և նրան ենթակայ 4000 ալբանիներին։

✦ Մակէդոնիայում քրիստոնեաների դրութիւնը սոսկալի է։ Տղամարդիկ լեռներն են բարձրացել։ Թիւրքերի հրոսակախմբերի քմահաճոյքներին մնացել են միայն կանայք, երեխաները և ծերունիները։ Իշխանութիւնները բոլոր հացը դրաւել են զօրքի համար։ Սկսվում է սով։

✦ Վիրաւորված սերբ զինուորների պատմելով՝ թիւրքաց արտիլերիայի հրամանատարներն են գերմանացի օֆիցէրներ։

✦ Օդեսայում բնակվող թիւրքահպատակները 40,000 ռուբլի ուղարկեցին Կ. Պոլիս՝ պատերազմի ծախքերի համար։ Բօրսայում գնները ընկնում են։

✦ Թիւրքաց սուլթանի ցանկութեամբ՝ Աբդիւլ-Համիդը մասնակցում է զինուորական խորհրդի բոլոր նիստերում, որ մեծ ուրախութեամբ օգտվում է նրա խորհուրդներից։

✦ «Н. Вр.»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ երիտասարդ-թիւրքերը Սալոնիկից Կ. Պոլիս բերելով Աբդիւլ Համիդին, իբր նպատակ ունեն գահընկեց անել այժմեան սուլթանին և նորից գահ բարձրացնել Աբդիւլին։

✦ Գերմանական մամուլը մի կատարեալ արշաւանք է սկսել Ռուսաստանի դէմ։ Այդ արշաւանքը համակրանքով է ընդունվում գերմանական քաղաքական շրջաններում։

✦ Բուլգարիան և Աւստրիան գաղտնի համաձայնութիւն են կապել, որով Բուլգարիան պէտք է միջամտէ այն դէպքում, եթէ Կ. Պոլսին սպառնայ լուրջ միջամտութիւն։

✦ Մեծ պետութիւնները համաձայնութեան եկան վերջ դնելու միացեալ ոյժերով բալկանեան պատերազմին վճռական ճակատամարտից յետոյ։

✦ «Zeit.»-ը գրում է, որ Ռուսաստանը ապարդիւն կերպով փորձեց փոխադարձութիւն կնքել Բերլինում և Պարիզում. իսկ Թիւրքիայի կողմից եղած քայլերը փոխադարձութիւն կնքելու՝ իբր թէ համակրանքի են հանդիպել։

✦ «Post»-ը ստոյգ աղբիւրից հաղորդում է, որ չերնոգօրցիները պատերազմի սկզբից կորցրել են 40,000 մարդ (մի քանի լրագիրներ գրում են 4000)։

✦ Ռուսաստանը և Աւստրիան յայտնեցին Բ. Դրանը պաշտօնապէս, որ նրանք իրանց իրաւունք են վերապահում ազատ գործելու ներկայ պատերազմի հարցում։

✦ Զինաթ Բակուրինը, որ Մոսկվայի մօտ յանկարծ դուրս եկաւ իր զօրամասի կողմից Թագաւոր Կայսրին խնդրագիր ներկայացնելու դիտաւորութեամբ, զինուորական դատարանից դատապարտվեց ցմահ տաժանակիր աշխատանքների։

✦ Պետերբուրգի քաղաքային վերատուչիչ յանձնաժողովի նախագահ Դանտրէն դատապարտվեց 36,000 ր., տուգանքի՝ իր վատնած գումարների դիմաց։

✦ Պետերբուրգում այս դեկտեմբերին կայանալու է բոլոր չորս Դումաների հրէայ պատուիրակների համագումարը։

✦ Պրեմիէր Կոկովցէվը շտապով մեկնեց Սպալա։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

12 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մենոզի օբէր-պրօկուրօրը մեկնեց Սպալա։

ՆԻԿՈԼԱՅԵՎ։ Զիւն եկաւ։ Հաղորդակցութիւնը կտրված է Օդեսայի հետ։

ՐԻԳԱ։ Արմիզդէտի այլին քաղաքին 136,000 ռուբլի նուիրեց թոքախտաւոր երեխաների համար բուժարան հիմնելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բոտով Դ.վ. շուրջը 100 վերստ տարածութեամբ հեռագրաթելերը փչացել են սաստիկ մրրիկից։

3-րդ Դումայի նախկին 436 անդամներից նորից ընտրվել են պատուիրակ 192։

ՍԷՎԱՍՏՈՊՕԼ։ Զինուորա-ծովային դատարանում դռնփակ սկսվեց այն 142 նաւաստիների գործի քննութիւնը, որոնք դաւադրութիւն պատրաստեցին նաւաստիների մէջ ապստամբութիւն յարուցելու համար։

ԲԵՐԼԻՆ։ Հիւսիսային թաղամասերի բնակիչները անկարգութիւններ արին մսագործների օգտագործելիքի պատճառով։ Մի խանութում մի քանի մարդ լուրջ վէրքեր ստացան։ Մսագործները այսօր ներողութիւն խնդրեցին և սկսեցին վաճառել ռուսական միսը։

14 հոկտեմբերի

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Գիշերս եկաւ կէս արշին ձիւն։ Էլեքտրաքարշը չէ գործում։

ՆՕՎՕՁԵՐԿԱՍԿ։ Մրրիկը փչացրեց հեռագրաթելերը, ոչնչացրեց հեռախօսի կայանը։ Այգիները կիսով փչացան։ Դժբաղդութիւնների պատկերը անկարագրելի է։

ՆԻԿՈԼԱՅԵՎ։ Զիւնախառն փոթորիկ է։ Եկաւ անագին քանակութեամբ ձիւն։ Սահնակները են երթևեկում։

ՕԴԵՍՍԱ։ Ծովի վրա փոթորիկ է. 6 աստիճան սառնամանիք է։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ։ Զիւնախառն մրրիկ է։ Ղրիմի հետ հեռագիրը չէ գործում։

ԿԻԵՎ։ Գլխաւոր և Ելիսավէտգրադի գծերի վրա ձիւնախառն մրրիկ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՀԻՒԱՆԴՆԵՐ,
ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ!

Երևան են եկել մեր Սպէրմինի սակաւարժէք նմանողութիւնները, որոնք ըստ ապրիլցութեան ոչ մի առնչութիւն չունեն մերինի հետ, և դեռ յաճախ նրանք պարունակում են իրանց մէջ առողջութեան համար վնասակար նիւթեր։

Նեվրասթենիայի, սեռական բուլութեան, զառամութեան, իստէրիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, բոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (շաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախուն, պէրէոյ, միօկարդիտ), **զարկերակի կարծրացումի, ալկոհոլիզմի, ողնաուարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած բուլութեան, յոգնածութեան** և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն **Սպէրմին-Պէլի** գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետեւանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների վկայութիւնները։ Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել

ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ

անուան վրա և հեռու մնալ զանազան անուններով եկող բոլոր մահլամներից և հեղուկներից, որոնց սակաւարժէք. համար հրատ. ունինք առանձին բրոշիւր, որն ուղարկի ՍՊԷՐՄԻՆի մասին եղած նոր գրական. հետ միասին։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ПРОФЕССОРЪ Д-РЪ ПЕЛЬ и С-ЬЯ
ПОСТАВЩИКИ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСК. ВЕЛИЧЕСТВА
С.ПЕТЕРБУРГЪ
В.О. 7 линія 18.

(II. 108963) 12—5

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վենեռական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեքտրաբուժութիւն։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլոլակի, Բէլուսովսկայա, № 33 (անկիւն Պասկևիչի փողոցի)։ Տելէֆոն № 1175.

(օ մ.) 377. 100—27

ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆՈՎ
ԾԱԽՎՈՒՄ Է
ՄԻ ՓՈՔՐ ՏՈՒՆ

130 սաժէն դեռնով, Կախէտինսկայա փողվրա, № 50. ունի նաև բանկի պարտք։ Պայմանների մասին հարցնել՝ Բազիէվսկայա փողոց, տ. № 4.

(Չ.ու.ի.) 766. 5—2

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

L. SOLUSOՅԻ հետեւեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ, թարգմ. Սուրխաթեանի . . . . 30 կ.
2) ԿՕՆՅՈՒԳԻՈՍ (Զինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տոլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՈՄԷԴԻ, ընտրված Լ. Տոլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . 5 կ.
4) ՔՈՑՐԵՐԸ, թարգ. Լ. Դանիէլեանի 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄՄՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . 10 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.

(Հ) 10—5

ԲՈՒԹԱՐԱՆ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

մշտական մահճակալներով

ՓՈԽԱԴՐՎԵԼ Է ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ

Միխայլովսկի պր. № 49, և անկիւն Բլուտովսկի փողոցի № 2. Տելէֆոն № 10—26.

Հիւանդների ընդունելութիւնը.

Աղաջանեան Միխայէլ.—մկասեռ., սիֆիլիս և կաշուի հիւ., ժ. 11—12-ը։
Վլուկով Վ. Վ.—խիրուրգ. հիւ., ժ. 1—2-ը։
Եղիազարեան Ի. Ն.—նեարքին, ջղային և հոգեկան հիւ., էլեքտրօաէրապիա, ժ. 11—12-ը։
Տէլիեվ Մ. Բ.—ականջի, քթի և կոկորդի հիւ., ժ. 12—1-ը։
Կիմօնս Մ. Պ.—խիրուրգ. հիւ., ժ. 11—12-ը։
Մաղաքեան Գ. Ն.—նեարքին և երիկ. հիւ., առանձ. նապէս որովայնա-ազիքային, ժ. 11½—12½-ը։
Շամսօ Ի. Ի.—խիրուրգ. հիւ., ժ. 12—1-ը։
Սուլթանով Ա. Ա.—ատամի հիւանդութիւններ, ժ. 9½—11½-ը։

Բուժարանում կատարվում է էլեքտր. բժշկութիւն և մասսաժ։ Միկրոսկոպ., բակտէրիոլոգ. և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստում։ Սանդուղների քննութիւն։ Խորհրդի վճարը 50 կոպ.։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր պալատից և թէ առանձին նոմէրներից։

ՍՐՍԿՈՒՄՆ «914» ի և «606»-ի։

(Ի. Հ. Կ.) 706. 100—10

Եղբ. Աւսարգիսովների

այլին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալոգներն ուղարկում են Զրի։

Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.

(Ի.Հ.Կ.) 739. 10—6

Շուտով ԵՐԵՒԱՆՈՒՄ լոյս է տեսնելու
ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ
ՆՈՐ-ՈՒԺԵՐ

(Հաւնորաբի սկզբունքը պահպանվում է)

Նիւթեր ուղարկել հետեւեալ հասցէով. Нахичевань (Эрив. губ.), учителю Аршалуйсу Теръ-Овнанянъ.

(Կ.) 771. 2—1

769. 0—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Ամենամեծ
ամենաշաւ ողողիչը

Մի սրուակը 85 կոպ., մեծ սրուակի գինը 1 ր. 50 կ.։

(M. 378072/378082)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный